Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 26-ի N 852-Լ որոշման

# ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՏԱՔՍՈՆՈՄԻԱ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԱՉ, ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՆՊԱՍՏՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Սույն փաստաթղթում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1) **Արտանետվող ջերմություն**՝ ջերմություն, որն առաջանում է արդյունաբերական կամ այլ էներգիա օգտագործող գործընթացների արդյունքում՝ որպես էներգիայի օգտագործման ոչ նպատակային, կողմնակի արդյունք.

2) **Դիմակայունություն՝** տարբեր դժվարություններին դիմակայելու կամ արագ վերականգնելու կարողություն (ներառյալ բնական աղետները, մարդածին պատահարները, ահաբեկչական կամ կիբեր հարձակումները և այլն).

3) **Ինստիտուցիոնալ ռիսկեր**՝ ոչ արդյունավետ աշխատանքի, վատ պլանավորման կամ վերջինիս բացակայության հետ (օրինակ՝ շրջակա միջավայրի մշտադիտարկման բացակայություն, անկախ դատական համակարգի բացակայություն կամ իրավիճակ, երբ կարգավորողը չի համապատասխանում իր կազմակերպչական և ռազմավարական նպատակներին և այլն) կապված ռիսկ.

4) **Կանաչ աճ**՝ ներառական տնտեսական աճ, որը ռեսուրսաարդյունավետ է բնական ռեսուրսներն օգտագործելու իմաստով, մաքուր է աղտոտվածությունը նվազեցնելու ներուժի իմաստով և դիմակայուն է բնական ռիսկերը հաշվի առնելու իմաստով.

5) **Կանաչ աշխատատեղեր**՝ աշխատատեղեր ձեռնարկություններում կամ

կազմակերպություններում, որոնց աշխատակիցների աշխատանքային պայմաններին բնորոշ են աշխատանքի, առողջության և անվտանգության ավելի լավ ցուցանիշներ՝ համեմատած տնտեսության նույն (ենթա)ոլորտում այլ ձեռնարկությունների կամ կազմակերպությունների հետ, կամ աշխատատեղեր, որտեղ նախորդ ժամանակահատվածի համեմատ արձանագրվել են դրական փոփոխություններ նշված ցուցանիշներում կանաչ կամ անցումային ծրագրերի և միջոցառումների իրականացման արդյունքում.

6) **Կանաչ բնակավայր**՝ օդի ավելի լավ որակ, կենցաղային թափոնների կառավարման, ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների բարելավված համակարգ ունեցող և ավելացված կանաչ գոտիներով բնակավայր, կամ տվյալ բնակավայրի վիճակը նախքան համապատասխան կանաչ, անցումային կամ նպաստող ծրագրերի և միջոցառումների իրականացումը.

7) **Կայուն զարգացում**՝ զարգացում, որը բավարարում է ներկա (սերունդների) կարիքները՝ չվտանգելով ապագա սերունդների՝ սեփական կարիքները բավարարելու կարողությունը.

8) **Կանաչ լվացում**՝ ցանկացած մեթոդ, ներառյալ՝ պիտակավորումը, տեղեկատվության ոչ ճշգրիտ կամ թերի բացահայտումը կամ հասարակայնության հետ կապերի քարոզարշավը, որը նպատակ ունի մոլորեցնել կարգավորող մարմիններին, քաղաքացիական հասարակությանը և սպառողներին, թե որքանով է ընկերության գործունեությունը և վերջինիս արտադրանքը բարենպաստ բնապահպանական տեսանկյունից՝ ներառյալ շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա ազդեցությունները.

9) **Կանաչ տնտեսություն**՝ ռեսուրսախնայող, ցածր ածխածնային, սակավաթափոն և սոցիալապես ներառական տնտեսություն՝ զարգացման տեխնոլոգիա և վարքագծային մոդել, որը ներառում է քաղաքականության համարժեք շրջանակ, մեխանիզմներ ու գործիքակազմ.

10) **Մատակարարի վարքագծի կանոնագիրք**՝ փաստաթուղթ, որը սահմանում է այն բարոյական, սոցիալական և բնապահպանական պահանջները, որոնք մատակարարները

պետք է պահեն՝ համագործակցելով հանքարդյունաբերական ընկերությունների հետ: Կանոնագրքի նպատակն է ապահովել, որ մատակարարները գործեն օրինականության, աշխատանքային իրավունքների պահպանման, կոռուպցիայի բացառման և շրջակա միջավայրի պահպանման սկզբունքներով: Այն կիրառվում է մատակարարման ողջ շղթայի նկատմամբ՝ կանխելու ռիսկերն ու խթանելու պատասխանատու և կայուն գործունեությունը.

11) **Միջազգային մեծ պատվարների հանձնաժողով՝** մասնագիտացված կազմակերպություն, որը մշակում է հիդրոտեխնիկական կառույցների, հատկապես՝ ամբարտակների նախագծման, շինարարության, շահագործման և անվտանգության ոլորտում միջազգային չափանիշներ և ուղեցույցներ: Վերջինիս նորմերն ու ստանդարտները ներառում են տեխնիկական ուղեցույցներ, լավագույն փորձի օրինակներ և անվտանգության պահանջներ՝ ուղղված ամբարտակների կառուցվածքային կայունության, սեյսմիկ դիմակայունության, ջրի կառավարման և շրջակա միջավայրի ու սոցիալական ազդեցությունների վերահսկման ապահովմանը.

12) **Շրջանաձև տնտեսություն՝** արտադրության և սպառման մոդել, որը ներառում է առկա նյութերի, արտադրանքի, դրանց բաղկացուցիչ մասերի վերօգտագործում, վերականգնում, վերամշակում, վերանորոգում՝ ապահովելով դրանց առավելագույն օգտակարությունն ու արժեքը հնարավորինս երկար ժամանակով.

13) **Որակավորված վերիֆիկատոր՝** սուբյեկտ, որը լիազորված է մեկ կամ մի քանի առաջնահերթ ոլորտներում որակել ծրագրերը և միջոցառումները՝ որպես կանաչ, անցումային կամ նպաստող կամ նշված երեք տեսակներից ոչ մեկը.

14) **Պերմակուլտուրա՝** կայունությանն ու ինքնաբավությանն ուղղված գյուղատնտեսական էկոհամակարգերի զարգացում.

15) **Տաքսոնոմիա՝** կանաչ և անցումային ծրագրերի ու միջոցառումների, այդ թվում՝ բնապահպանական տեսանկյունից կայուն և տնտեսության հիմնական ոլորտներում ներդրումային ծրագրերի համար համապատասխանության չափանիշներ սահմանող, ինչպես նաև կանաչ և անցումային ծրագրերի և միջոցառումների իրականացմանը նպաստող ծրագրերի և միջոցառումների դասակարգման համակարգ.

16) **Փակման հիմնադրամի ֆինանսական ապահովվածություն՝** գործիքներ,

մեխանիզմներ և ֆինանսական երաշխիքների համակարգ, որը հանքավայրի շահագործողի համար ապահովում է բավարար միջոցներ հանքի փակման, վերականգնման և ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացման համար, անկախ նրանից՝ ընկերությունը շարունակում է գործել, թե՝ ոչ:

2. Հայաստանի Հանրապետությունում կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի ու միջոցառումների տեսակների դասակարգման համակարգը (այսուհետ՝ տաքսոնոմիա) ներառում է կայուն զարգացման ծրագրերի նույնականացման և ընտրության շրջանակ՝ միտված կայուն զարգացման խթանմանն ու կանաչ ներդրումների ներգրավմանը: Տաքսոնոմիան նպաստում է կանաչ և շրջանաձև տնտեսությանն անցմանը ու կանաչ աճի խթանմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության ու մեղմման միջոցառումների և կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

3. Տաքսոնոմիայի հիմքում դրված են տնտեսական ու սոցիալական, բնապահպանական և դիմակայունության ռազմավարական նպատակները:

4. Տնտեսական ու սոցիալական ռազմավարական նպատակներն են.

1) շրջանաձև տնտեսությանն անցում և ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում.

2) կանաչ աշխատատեղեր և կանաչ բնակավայրեր (աշխատանքի վայրում աշխատողների առողջությունն ու անվտանգությունն ապահովող միջոցառումների նախատեսում, բնակավայրերի կայուն ու ավելի կանաչ զարգացում և բնապահպանական տեսանկյունից բարելավված կյանքի որակ):

5. Բնապահպանական ռազմավարական նպատակներն են.

1) կլիմայի փոփոխության մեղմում.

2) կլիմայի փոփոխության հարմարվողականություն.

3) ջրային ռեսուրսների կայուն օգտագործում, պահպանություն և ինտեգրված կառավարում.

4) անտառների կայուն կառավարում, պահպանություն, կենսաբազմազանության ու բոլոր էկոհամակարգերի վերականգնում, կենսաբանական ռեսուրսների կայուն օգտագործում.

5) աղտոտման կանխարգելում և վերահսկում:

6. Դիմակայունության ռազմավարական նպատակն է՝

արդյունաբերական անվտանգությանը և աղետներին դիմակայունության բարելավում: այաստանի Հանրապետությունում տաքսոնոմիայի շրջանակը ներառում է հետևյալ առաջնահերթ ուղղությունները.

1) գյուղատնտեսություն.

2) անտառներ և ջրաճահճային տարածքներ.

3) պահպանվող տարածքների կառավարում և կայուն զբոսաշրջություն.

4) էներգետիկա.

5) կենսավառելիք.

6) ցամաքային տրանսպորտ.

7) հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման ենթակառուցվածք.

8) ջրային ռեսուրսներ և ջրային համակարգեր.

9) թափոնների կառավարում.

10) հանքարդյունաբերություն.

11) մշակող արդյունաբերություն.

12) շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության տեխնոլոգիաներ, ածխածնի կլանում (ածխածնի սեկվեստրացիա) և պահպանում.

13) քաղաքաշինություն (բնակավայրերի կայուն և կանաչ զարգացում):

8. Տաքսոնոմիայի իմաստով ծրագրերի և միջոցառումների տեսակները լինում են կանաչ, անցումային, նպաստող և ունեն հետևյալ նշանակությունը.

1) **կանաչ (Կ)**՝ տաքսոնոմիայի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսվող առնվազն մեկ ռազմավարական նպատակի իրականացմանն էապես նպաստող ներդրումներ.

2) **անցումային (Ա)**՝ տաքսոնոմիայի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսվող ռազմավարական նպատակների իրականացմանը միտված աստիճանական առաջընթաց ապահովող անհրաժեշտ ներդրումներ.

3) **նպաստող (Ն)**՝ օրենսդրական կարգավորման, տեղեկատվական համակարգերի (ներառյալ թվայնացումը) և հանրային ֆինանսների կառավարման բարելավմանն ուղղված գործողությունների շրջանակ՝ միտված կանաչ և անցումային ծրագրերի ու միջոցառումների իրականացմանը:

9. Տաքսոնոմիայի շրջանակում ծրագրերի և միջոցառումների որոշ տեսակների համար նախատեսված են տեխնիկական համապատասխանության չափանիշներ, իսկ մյուս տեսակների համար տեխնիկական համապատասխանության չափանիշները կմշակվեն՝ ըստ անհրաժեշտության: Տեխնիկական համապատասխանության չափանիշները կիրառվում են ի լրումն հետևյալ չափորոշիչների՝ տվյալ ծրագիրը կամ միջոցառումն էապես նպաստում է տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներից առնվազն մեկի իրականացմանը կամ էական քայլ է անցումային ծրագրերի կամ միջոցառումների ռազմավարական նպատակին հասնելու համար և էականորեն չի խոչընդոտում տաքսոնոմիայի որևէ այլ ռազմավարական նպատակին և համապատասխանում է երաշխիքների նվազագույն պահանջներին:

10. Յուրաքանչյուր ծրագիր և միջոցառում պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության գործող տեխնիկական, սանիտարական և բնապահպանական կարգավորումներին, լինի ծախսարդյունավետ, իսկ իրականացումը կապված լինի ռիսկերի ընդունելի մակարդակի հետ: Ի լրումն ծրագրի և միջոցառման կենսացիկլի կառավարման շրջանակում հատկորոշված պայմանական ռիսկերի՝ պետք է հաշվի առնել նաև դիմակայունությունը կլիմայական ռիսկերի և բնական աղետների նկատմամբ, կանաչ լվացման ռիսկը և ինստիտուցիոնալ ռիսկերը:

11. Սույն որոշմամբ նախատեսված ուղղությունների, ենթաուղղությունների, ծրագրերի և միջոցառումների տեսակների ու տեխնիկական համապատասխանության չափանիշների ցանկը սահմանվում է՝ համաձայն Աղյուսակ 1-ի:

12. Տաքսոնոմիայի շահառուների հիմնական շրջանակը ներառում, սակայն չի սահմանափակվում պետական կառավարման համակարգի մարմիններով, միջազգային ֆինանսական հաստատություններով և մասնավոր հատվածի ներկայացուցիչներով, այդ

թվում՝ ֆինանսական կազմակերպություններով, ձեռնարկություններով, տնային և ֆերմերային տնտեսություններով:

13. Տաքսոնոմիայի շրջանակի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2026 թվականի 2-րդ եռամսյակ նախատեսվում է մշակել.

1) տաքսոնոմիայով նախատեսված ուղղություններին, ենթաուղղություններին և ծրագրերին ու միջոցառումներին առնչվող գործող նորմատիվ իրավական ակտերում, ըստ անհրաժեշտության, համապատասխան լրացումների և (կամ) փոփոխությունների նախագծերի փաթեթ և հաշվետվողականության մեխանիզմ.

2) կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի ու միջոցառումների տեսակների վերիֆիկացման իրականացման, վերիֆիկատորներին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանող ընթացակարգ.

3) ըստ անհրաժեշտության՝ համապատասխան ոլորտային ուղեցույցներ, տեխնիկական համապատասխանության չափանիշներ և ստանդարտներ:

**Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետությունում կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգ (տաքսոնոմիա)**

| Գյուղատնտեսություն | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Գյուղատնտեսության ոլորտի կայուն կառավարում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 5.1, 5.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | 1.1 Մշակաբույսերի աճեցման ագրոտեխնիկայի բարելավում, կիրառվող ագրոտեխնոլոգիաների և ագրոտեխնիկական միջոցների արդիականացում և բարելավում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.2 Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակի բարձրացում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 1.3 Գյուղատնտեսական | Ա | Գյուղատնտեսական նշանակության |

| | | | |
|---|---|---|---|
| | նշանակության հողերի մշակման սխեմաների և չափորոշիչների մշակում և ներդնում (ներառյալ՝ ածխածնային հողագործություն) | | հողերի մշակման արդյունավետության ավելացում 25%-ով և ավելի<br><br>Գյուղատնտեսական նշանակության հողերում օրգանական նյութերի քանակի ավելացում առնվազն 3%-ով |
| | 1.4 Գյուղատնտեսության մեջ թվային, խելացի կառավարման համակարգերի կիրառում (ներառյալ՝ տվյալահեն և ճշգրիտ գյուղատնտեսության կիրառում) | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան (Տե՛ս նաև սույն Աղյուսակի «Հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման ենթակառուցվածք» ուղղությունը) |
| | 1.5 Հողի, բնահողի մշակման մեթոդների բարելավում | Կ, Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 1.6 Գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի արդյունավետության բարելավում՝ ներառելով մեքենայացումը և արդյունավետության | Ա | Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների աշխատուժի արդյունավետության բարձրացում 100%-ով մինչև 2029թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | բարելավման համար լոգիստիկայի օպտիմալացումը | | |
| | 1.7 Մատակարարվող գյուղատնտեսական ոլորտի ներդրանքների (սերմեր, պարարտանյութեր, վառելիք և այլն) անվտանգության նկատմամբ հսկողության մակարդակի բարձրացում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 1.8 Գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկությունների միջև համագործակցային և կոոպերացիայի պրակտիկայի խթանում, տեղեկատվության փոխանակման և ագրո-մարքեթինգային ծառայությունների զարգացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.9 Սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում, այդ թվում՝ գյուղատնտեսական | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | ապրանքների, անասնակերի և հումքի, վերահսկողություն՝ համապարփակ որակի վերահսկողության և կանոնակարգային պահանջներին համապատասխանության ապահովման նպատակով | | |
| | 1.10 Արոտավայրերի և խոտհարքների վիճակի մշտադիտարկման և հսկողության արդյունավետ համակարգի ներդնում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.11 Արոտավայրերի կառավարման իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.12 Համայնքային մակարդակով արոտավայրերի պատշաճ կառավարում և վերահսկողություն | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | 1.13 Կենդանիների արածեցման կայուն համակարգի ներդնում արոտավայրերի կառավարման պլանների կիրառման միջոցով | Ա | Արածեցման կայուն համակարգերի ներդնում<br><br>Արոտավայրերի կառավարման պլանների մշակում և իրականացում<br><br>Արոտավայրերի արդյունավետ կառավարման բարելավման արդյունքում արոտավայրերի ծանրաբեռնվածության կրճատում հեկտարի վրա |
| | 1.14 Խմելու ջրի մատակարարման (կենդանիների համար) և կացարանների ենթակառուցվածքի (հովիվների համար) բարելավում հեռագնա արոտավայրերում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 1.15 Կենսաբազմազանության պահպանում բնական արոտավայրերում | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 1.16 Կերերի արտադրության մոտեցումների զարգացում (օրինակ՝ հիդրոպոնիկայի միջոցով) | Ա | Հիդրոպոնիկ կերերի արտադրության աճ |
| | 1.17 Գյուղմթերքների պահեստավորման և տեղական վերամշակման զարգացում. կերի պահպանման առաջադեմ մեթոդների ներդնում | Ա | Կերերի արտադրության և կերերի պահեստավորման կարողությունների ավելացում |
| **2. Բուսաբուծություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 5.1, 5.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | 2.1 Գյուղատնտեսական նշանակության հողերի կայուն կառավարման մեթոդների կիրառում. հողի զրոյական կամ նվազագույն նախապատրաստման տեխնոլոգիաներ, ցանքաշրջանառություն, ագրո-անտառտնտեսություն, օրգանական ֆերմերային տնտեսություն, վնասատուների ինտեգրված կառավարում, | Կ, Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | ծածկութային մշակաբույսեր ու դաշտապաշտպան բույսեր և այլն | | |
| | 2.2 Բազմամյա մշակաբույսերի օգտագործման ավելացման խթանում | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.3 Շրջակա միջավայրի և մարդու առողջության համար խիստ թունավոր և բարձր վտանգավորության (վտանգի) դասերին պատկանող թունաքիմիկատների տեսակների ներմուծման և օգտագործման կրճատում կամ արգելք | Ա, Ն | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.4 Օրգանական պարարտանյութերի և բույսերի պաշտպանության օրգանական միջոցառումների օգտագործման ընդլայնում բույսերի պաշտպանության նպատակով | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 2.5 Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիա և դրանց վերադարձ արդյունավետ օգտագործման համար (օրինակ՝ չշահագործվող հանքավայրերի, քաղաքային հողերի, աղակալած հողերի մաքրում ու ռեկուլտիվացիա և այլն) | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.6 Որպես մաքուր հավաստագրված հողերի վրա մերձքաղաքային գյուղատնտեսության խթանում | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.7 Հողերի վիճակի և որակի վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկման, տվյալների հավաքագրման, վերլուծության և փոխանակման արդյունավետ միասնական համակարգի մշակում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.8 Հողօգտագործման ստուգման և հողի որակի | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծում | | |
| | 2.9 Հողի կառավարման հարցերի ընդգրկում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթերում և համապատասխան իրավական դաշտի բարելավում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.10 Հողերի օգտագործման և պաշտպանության նպատակով ֆինանսական և տնտեսական արդյունավետ գործիքների և մեխանիզմների ներդնում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.11 Օրգանական գյուղատնտեսության սկզբունքների հիման վրա կառավարվող հողատարածքների ավելացում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.12 Ոռոգվող վարելահողերի մասնաբաժնի ավելացում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 2.13 Ոռոգման ենթակառուցվածքների վիճակի բարելավում, ջրակորուստների և ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատում | Ա, Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ՝ հաշվի առնելով գյուղատնտեսական նշանակության հողի 1 հեկտարի համար ջրօգտագործման ծավալի կրճատումը ոռոգման ժամանակակից համակարգերի շարունակական ներդրման միջոցով |
| | 2.14 Ոռոգման նպատակով ջրի պահեստավորման պոտենցիալի լիարժեք իրացում | Ա | Փոքր և միջին ջրամբարների միջոցով կուտակված և օգտագործված լրացուցիչ ջրի քանակը |
| | 2.15 Ջրանցքներում ջրի քանակի չափումների և ջրի որակի մշտադիտարկման  նպատակով ժամանակակից համակարգերի կիրառում | Ա, Ն | Տե՛ս սույն Աղյուսակի «Ջրային ռեսուրսներ և ջրային համակարգեր» ուղղությունը |
| | 2.16 Գյուղատնտեսական նշանակության հողերից գոլորշիացումը կրճատող պրակտիկաների և | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | ագրոտեխնոլոգիաների կիրառման խթանում | | |
| | 2.17 Ոռոգելի հողերի վրա կոլեկտորադրենաժային համակարգերի մշակում և ֆիլտրացված ջրի վերօգտագործում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.18 Քաղաքային կեղտաջրերի մաքրման համակարգերի կիրառում և գյուղատնտեսական նպատակներով մաքրված ջրի օգտագործում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| **3. Անասնաբուծություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 5.1, 5.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | 3.1 Անասունների բուծման և կերակրման արդյունավետության բարձրացում | Ա | Ընտանի կենդանիների հաշվառման և գրանցման համակարգի ներդնում<br><br>Ցեղային կենդանիների տեսակարար կշռի տարեկան աճ 10-15%-ով<br><br>Մեկ ֆերմերային տնտեսության միջին եկամտի աճ ՀՀ դրամով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ֆերմերային տնտեսության (տնտեսավարող սուբյեկտի) արտադրողականության աճ |
| | 3.2 Մեղվաբուծության զարգացում, մեղվաբուծական արտադրանքի ընդլայնում | Կ | Փեթակների քանակի, մեղվաբուծական արտադրանքի ծավալի աճ |
| **4. Ձկնաբուծություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 5.2, 5.3, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | 4.1 Ջրախնայող և էներգախնայող տեխնոլոգիաների ներդնում ձկնաբուծության ոլորտում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| **5. Կլիմայական անվտանգ և կլիմայակայուն գյուղատնտեսության սկզբունքների իրականացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 5.1, 5.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | 5.1 Գյուղատնտեսության ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատում | Կ | Կրճատված ջերմոցային գազերի արտանետումներ |
| | 5.2 Դաշտերի հրդեհների կանխարգելում | Ա | Այրված գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի նվազեցում |
| | 5.3 Կլիմայի առումով խելացի գյուղատնտեսության | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | զարգացման սկզբունքների իրականացում | | |
| | 5.4 Կերի մարսողության բարձրացում անասնաբուծության ջերմոցային գազերի արտանետումների կրճատման նպատակով | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.5 Ագրո-լանդշաֆտներում կուտակված օրգանական ածխածնի քանակի ավելացում | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.6 Ագրո-անտառային տնտեսությունների հիմնում և պերմակուլտուրայի տնտեսության պրակտիկաների իրականացում | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.7 Դարավանդավորման կիրառմամբ հողագործության զարգացում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.8 Կլիմայի փոփոխության հարմարվողականության պրակտիկաների մասին | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | իրազեկում և գիտելիքների ձևավորում | | |
| | 5.9 Արտակարգ կլիմայական երևույթներին, այդ թվում՝ երաշտներին, դիմակայելու կարողությունների զարգացում | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 5.10 Ջրախնայող և էներգաարդյունավետ ոռոգման ժամանակակից համակարգերի ներդնում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.11 Փակ գրունտում գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ավելացում և ցանքածածկման կիրառություն (ջերմոցներ, տաք գրունտ, հողի մակերեսի ծածկում և այլն) | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **6. Գյուղատնտեսական թափոնների պատշաճ կառավարում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական | 6.1 Կենսաբանական թափոնների, այդ թվում՝ գոմաղբի, պատշաճ կառավարման իրավական և | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| նպատակներ՝ 4.1, 5.1, 5.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 2, 8, 9, 12, 13, 15 | ինստիտուցիոնալ համակարգի ներդնում | | |
| | 6.2 Կենսաբանական թափոնների, այդ թվում՝ գոմաղբի, պատշաճ կառավարման վերաբերյալ ձեռնարկությունների իրազեկվածության և գիտելիքի մակարդակի բարձրացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 6.3 Կենսաբանական թափոնների և խոզանաբույս մշակաբույսերի մնացորդները վառելու գործելակերպի վերացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 6.4 Օրգանական պարարտանյութերի և կենսաբանական թափոնների կիրառմամբ կենսահումուսի տեղական արտադրության խթանում | Ա | Մակերևութային ջրային մարմիններն աղտոտող և բնակավայրերում կուտակվող գյուղատնտեսական օրգանական թափոնների կրճատված քանակ<br><br>Օրգանական պարարտանյութերի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | օգտագործման արդյունքում հողի որակի և բերքատվության բարելավում |
| | 6.5 Կենսաէներգիայի բնագավառի զարգացում. կոշտ կենսավառելիքի, կենսաէթանոլի և կենսագազի արտադրության խթանում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ<br>(Տե՛ս նաև սույն Աղյուսակի «Կենսավառելիք» ուղղությունը) |

| **Անտառներ և ջրաճահճային տարածքներ** | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն<br>(հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Անտառտնտեսության ոլորտի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական | 1.1 Անտառային էկոհամակարգերի պաշտպանության, վերարտադրության և վերահսկման հավասարակշռված | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| նպատակներ՝ 4.2, 5.1, 5.2, 5.4<br>ԿԶՆ-ներ՝ 8, 11, 12, 13, 15 | կառավարում | | |
| | 1.2 Հայաստանի Հանրապետության անտառային նոր քաղաքականության, ռազմավարության և ազգային գործողությունների ծրագրի մշակում և ընդունում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.3 Անտառային հողատարածքների սահմանազատված արտաքին սահմանների ժամանակակից թվայնացված կառավարման պլանների և քարտեզների ներդնում՝ կենսաբազմազանության և անտառային ածխածնի հաշվառման համակարգերի պահանջների համաձայն | Ն | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերն ունեն թվայնացված անտառաշինական նախագծեր (անտառակառավարման պլաններ)՝ սահմանված սահմաններով, կենսաբազմազանության և ածխածնի հաշվառման գործելակարգերով |
| | 1.4 Հայաստանի Հանրապետությունում անտառապատման, | Ն | Անտառավերականգնման և անտառապատման նպատակով պետական, համայնքային և |

| | | | |
|---|---|---|---|
| | անտառավերականգնման համար օգտագործվող հողատարածքների (պետական, համայնքային և մասնավոր անտառային հողեր) որոշում և առաջնահերթության սահմանում | | մասնավոր անտառային հողերը որոշված և քարտեզագրված են |
| | 1.5 Մոտեցումների, կանոնների և խթանների սահմանում՝ մասնավոր և համայնքային անտառների և ագրոանտառների համար | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.6 Անտառատնկարկներն անտառի շարք փոխադրելու կարգի սահմանում | Ն | «Անտառատնկարկներն անտառի շարք փոխադրելու կարգը սահմանելու մասին» հրամանի ընդունում՝ համաձայն ՀՀ անտառային օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի |
| **2. Ջրաճահճային տարածքների համար իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավում** | 2.1 Ջրաճահճային տարածքների պահպանում և կայուն կառավարում՝ որպես կենսաբազմազանության և | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.2, 5.4<br>ԿԶՆ-ներ՝ 13, 15 | մակերևութային ու ստորգետնյա ջրերի ձևավորմանն աջակցող էկոհամակարգեր | | |
| | 2.2 Ջրաճահճային տարածքների կադաստրի, քարտեզների և կայուն զարգացման պլանների ստեղծում Հայաստանի Հանրապետության տարածքում առկա 70 տորֆային ճահիճների համար, որոնք զբաղեցնում են 3000 հա տարածք, և որոնց շուկայական ծավալը կազմում է 50 մլն մ³<br><br>Կարգավորող և ինստիտուցիոնալ շրջանակի ներդնում ջրածածկ էկոհամակարգի պահպանումը կառավարելու համար | Ն | Մշակվել են ջրաճահճային տարածքների գույքագրման քարտեզներ և կառավարման պլաններ 70 տորֆային ճահիճների համար (3000 հա) |
| | 2.3 Ջրաճահճային տարածքների գույքագրման, քարտեզագրման, մշտադիտարկման իրականացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | և կառավարում Հայաստանի Հանրապետության 70 տորֆային ճահիճների համար | | |
| **3. Անտառտնտեսություն և ջրաճահճային տարածքների մասին կրթություն և գիտություն, մասնագիտական և տեխնիկական կարողությունների զարգացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 4, 13, 15 | 3.1 Ֆինանսավորման ապահովում անտառտնտեսության ոլորտի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների և միջին մասնագիտական կրթությամբ անձնակազմի վերապատրաստման և անտառտնտեսության ոլորտում հետազոտական աշխատանքների համար | Ա | Տարեկան վերապատրաստվում է առնվազն 6-10 մասնագետ |
| | 3.2 Անտառների պահպանության ու պաշտպանության և կայուն կառավարման վերաբերյալ ուսումնական պլանի արդիականացում համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ | Ն | Անտառների պահպանության ու պաշտպանության և կայուն կառավարման ուսումնական ծրագիրը բարելավված է |

| | | | |
|---|---|---|---|
| | ինքնակառավարման սկզբունքի հիման վրա<br><br>Սոցիոլոգիական մոտեցումների արդյունավետ ինտեգրում անտառտնտեսության կրթության և հետազոտությունների մեջ | | |
| | 3.3 Դպրոցական ծրագրերում ճամբարների ձևաչափի ներդնում Հայաստանի Հանրապետության անտառներ և բարձր արժեք ներկայացնող ջրաճահճային տարածքներ այցելելու նպատակով | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **4. Անտառային ծածկույթի վերականգնում և ավելացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.1, 5.2, 5.4, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 3, 6, 8, 11, 13, 15 | 4.1 Անտառավերականգնման, անտառապատման ծրագրերի իրականացում ազգային նպատակներին հասնելու համար<br><br>Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ոչ փայտային | Կ | Վերականգնված, անտառապատված տարածքների մակերեսը (հա) |

| | | | |
|---|---|---|---|
| | անտառային արտադրանքի տեղամասերին և դրանց կայուն կառավարմանը<br><br>Անտառավերականգնումը և անտառապատումը նպաստում են Փարիզյան համաձայնագրով և Բոննի մարտահրավերով ստանձնած պարտավորությունների կատարմանը | | |
| **5. Քաղաքային անտառտնտեսություն, քաղաքային կանաչ տարածքներ և քաղաքային ջրաճահճային տարածքներ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.1, 5.2, 5.4, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 11, 13, 15 | 5.1 Քաղաքային և մերձքաղաքային անտառների և կանաչ տարածքների ավելացում | Կ | Երևանում, Վանաձորում, Գյումրիում և այլ խոշոր քաղաքներում ստեղծված կամ բարեկարգված կանաչ տարածքներ (հա)՝ հագեցած ոռոգման ժամանակակից և կանոնավոր սպասարկման համակարգերով |
| | 5.2 Փողոցների ստվերող ծառերի և կանաչ գոտիների ավելացում | Ա | Քաղաքային բնակավայրերում ավելացված կանաչ տարածքների մակերեսը (հա) |

| | | | |
|---|---|---|---|
| | 5.3 Քաղաքային բնակավայրերում կանաչ տարածքների կապակցվածության ավելացում (հակազդելով բուսական և կենդանական աշխարհի կենսամիջավայրերի մասնատմանը) | Ա | Քաղաքային կանաչ գոտիները միացնելու համար քաղաքային բնակավայրերում ստեղծված էկոմիջանցքների թիվը |
| | 5.4 Երևանի Հրազդանի կիրճը որպես պահպանվող տարածք ճանաչում | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **6. Սարքավորումներ և ենթակառուցվածք**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 8, 9, 13, 15 | 6.1 Պետական անտառային սերմերի և տնկարանների կառավարման, անտառատնկման և անտառների պաշտպանության, հրդեհաշիջման և այլ տնտեսական ու պաշտպանական միջոցառումների համար մեքենամեխանիզմների և սարքավորումների գնում | Կ, Ա | Կ՝ տեղադրված ժամանակակից անտառային տնկարան-ջերմոցների քանակը և հզորությունը<br><br>Ա՝ հանրային հատվածում սերմերի և տնկարանների կառավարման համար ձեռք բերված մեքենաների և սարքավորումների միավորների քանակը<br><br>Ա՝ գնված հրշեջ-մեքենաների և |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սարքերի քանակը |
| | 6.2 Անտառային ճանապարհների բարեկարգում, մշտադիտարկում և կանոնավոր սպասարկում | Կ | Բարեկարգված և (կամ) նոր կառուցված անտառային ճանապարհների երկարությունը (կմ) |
| | 6.3 Թվային տվյալների ենթակառուցվածքի ստեղծում՝ սերմնատու ծառերի որոնման և պիտակավորման համար, սերմերի տվյալների բազայի և փորձագիտական սերմացու կայանի ստեղծում | Ն | Ստեղծվել է սերմնատու ծառերի տեղակայման վայրի և պիտակավորման թվային տեղեկատվական բազան |
| | 6.4 Անտառային տնտեսության, զբոսաշրջության (հյուրընկալության) ոլորտում էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կիրառում, օրինակ՝ կիսաանապատային գոտու պայմաններում կաթիլային ոռոգում, կենսաբանական պայքարի միջոցառումներ | Ա | Անտառային տնտեսությունում ներդրված էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների թիվը |

| | | | |
|---|---|---|---|
| | անտառային վնասատուների և հիվանդությունների և այլնի դեմ | | |
| **Պահպանվող տարածքների կառավարում և կայուն զբոսաշրջություն** | | | |
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Պահպանվող տարածքների իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.1, 5.2, 5.4<br>ԿԶՆ-ներ՝ 3, 6, 8, 11, 13, 15 | 1.1 Բնության բոլոր հատուկ պահպանվող տարածքներում հաշվառման, քարտեզագրման, կառավարման և մշտադիտարկման ժամանակակից գործող համակարգերի նախատեսում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.2 Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի համապատասխանեցում | Ն | Բնության հատուկ պահպանվող տարածքների համապատասխանեցումը Բնության պահպանության միջազգային միության համապատասխան |

| | | | |
|---|---|---|---|
| | Բնության պահպանության միջազգային միության կատեգորիաներին | | կատեգորիաներին |
| | 1.3 Պահպանվող տարածքների տեսակների և կառավարման նոր մոդելների ձևավորման հնարավորություն (օրինակ՝ տարածքի հավատարմագրային կառավարում, համայնքային սեփականություն հանդիսացող պահպանվող տարածքներ և այլն) | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.4 Ածխածնի կուտակման բարձր պոտենցիալով նոր էկոհամակարգերը (անտառներ, ջրաճահճային տարածքներ, լեռնալպյան և ալպյան մարգագետիններ) բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում ներառելու նպատակով | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | կարգավորումների մշակում | | |
| | 1.5 Էկոհամակարգերի ածխածնի պաշարների մշտադիտարկման, ածխածնի կլանման կարողությունների գնահատման և բարելավման, կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարման և մեղմման համակարգի մշակում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **2. Հիմնական հետազոտական և գիտական ուսումնասիրությունների իրականացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4<br>ԿԶՆ-ներ՝ 4, 6, 13, 15 | 2.1 Կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման, բնության հատուկ պահպանվող տարածքների դերն ու նշանակությունը գնահատելու համար հետազոտությունների իրականացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.2 Բնության հատուկ պահպանվող տարածքների կողմից տրամադրվող ծառայությունների տնտեսական | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | ծախսարդյունավետության գնահատում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների տնտեսական ազդեցությունը գնահատելու համար | | |
| | 2.3 Ածխածնի կուտակման մեծ պոտենցիալ ունեցող էկոհամակարգերի (անտառներ, ջրաճահճային տարածքներ, լեռնալպյան և ալպյան մարգագետիններ) ուսումնասիրություններ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **3. Կրթություն և մասնագիտական զարգացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4<br>ԿԶՆ-ներ՝ 4, 8, 13, 15 | 3.1 Համապատասխան մասնագետների մասնագիտական վերապատրաստում և կարողությունների զարգացում կայուն զբոսաշրջության, պահպանվող տարածքների և | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | կանաչ հյուրընկալության թեմայով | | |
| **4. Իրազեկում**<br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.4<br>ԿԶՆ՝ 15 | 4.1 Իրազեկման արշավներ ներքին և ներգնա զբոսաշրջիկների համար կլիմայական փոփոխությունների հարմարվողականությամբ պայմանավորված տնտեսական վերափոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **5. Պահպանվող նոր տարածքների ստեղծում և կենսաբազմազանության կառավարման բարելավում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.4<br>ԿԶՆ՝ 15 | 5.1 Պահպանվող նոր տարածքների սահմանազատում, սահմանագծում, հաշվառում և ինտեգրում բնության հատուկ պահպանվող տարածքների առկա ցանցին՝ ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի N 1059-Ա որոշման և միջազգային պարտավորությունների համաձայն | Ն | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 5.2 Կենսաբազմազանության մշտադիտարկման և գույքագրման (կադաստրի) ենթակառուցվածքի ստեղծում և շահագործում | Ն | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| **6. Բնության հատուկ պահպանվող տարածքների շուրջ հանգստի և կայուն զբոսաշրջության զարգացում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.4<br>ԿԶՆ՝ 15 | 6.1 Հանգստի և զբոսաշրջության զարգացում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում և դրանց շուրջ՝ համապատասխան ենթակառուցվածքի ձևավորման միջոցով<br><br>Էներգախնայող տեխնոլոգիաների կիրառում<br><br>Թափոնների կառավարման նոր մեխանիզմների ներդնում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| **Էներգետիկա** | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման** | **Տեխնիկական համապատասխանության** |

| **ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | | **տեսակ** | **չափանիշներ** |
|---|---|---|---|
| **1. Էլեկտրաէներգիայի արտադրություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.5, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 13<br>Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններ | 1.1 Հայաստանի ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգում մինչև 2036թ. (և հավանական ավել ժամկետով) և ատոմային ներկայիս բլոկի փոխարինում նորով, քննարկումներ փոքր և միկրո ռեակտորների պոտենցիալ օգտագործման շուրջ | Կ կամ Ա | Ատոմային էլեկտրակայանը սույն որոշման շրջանակներում դիտարկվում է կանաչ, եթե այն բավարարում է մի շարք խիստ պայմանների, ներառյալ.<br>Ունի գործող հարմարություններ (շարժական և անշարժ), օբյեկտներ շատ ցածր ռադիոակտիվությամբ, ցածր ակտիվությամբ և միջանկյալ ռադիոակտիվությամբ ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար<br><br>Ունի պատրաստի ծրագրեր գոյություն ունեցող օբյեկտի բարձր ռադիոակտիվությամբ մակարդակի ռադիոակտիվ թափոնների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հեռացման հարմարությունների (շարժական և անշարժ) ստեղծման և շահագործման համար<br><br>2036 թվականի դրությամբ գործող և նոր նախագծերը պետք է օգտագործեն վթարներին բարձր դիմակայունությամբ վառելիք, որը հավաստագրված և հաստատված է ազգային կարգավորող մարմնի կողմից<br><br>Վերոնշյալ պայմաններին չբավարարելու պարագայում սույն որոշման համաձայն ատոմային էլեկտրակայանը կհամարվի անցումային |
| | 1.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |

| | | | |
|---|---|---|---|
| | կայաններով | | |
| | 1.3 Էլեկտրաէներգիայի արտադրություն արդյունաբերական մասշտաբի հողմակայաններով | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 1.4 Համակցված ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրություն | Կ | Ջերմության և հովացման արտադրության և հանածո վառելիքի ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված տեխնոլոգիաները սույն որոշման շրջանակում կարող են դիտարկվել կանաչ, եթե 1 ՄՎտժ ջերմության (հովացման) և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կենսացիկլի ազդեցությունը ցածր է  նվազող շեմից: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առկա շեմերը՝ գազի հիմքով ջերմության արտադրության համար առաջարկվող շեմը ցանցի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտանետումների գործակիցն է, որը պարբերաբար վերանայվում է: $CO_2$ արտանետումների գործակիցը, ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրման առկա և նախատեսվող հզորությունները = 0.34տ $CO_{2e}$/ՄՎտԺ |
| | 1.5 Թափոնների այրում էներգիայի ստացմամբ (Տե՛ս նաև սույն աղյուսակի «Կենսավառելիք» և «Թափոնների կառավարում» ուղղությունները) | Կ | Թափոններից ջերմության վերականգնման բոլոր տեսակները համապատասխանում են պահանջներին |
| | 1.6 Արտանետվող ջերմության կիրառում (ատոմային էլեկտրակայան) | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.7 Խոշոր էլեկտրակայաններում (ՋԷԿ-եր, ատոմակայան) անցում օդային չոր հովացման համակարգերին | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 1.8 Փոքր հիդրոէներգետիկ | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | կարողությունների վերագնահատում, Հայաստանի Հանրապետության գետերի հիդրոպոտենցիալի քարտեզագրում | | |
| | 1.9 Կանաչ ջրածնի արտադրություն | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 1.10 Ջրածնի օգտագործում (կապույտ, կանաչ, մանուշակագույն) գազային էլեկտրակայաններում | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.11 Վերականգնվող էներգիայի օգտագործմամբ միկրոցանցերի ստեղծում՝ տեղական և համակարգի դիմակայունությունը բարձրացնելու համար | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 1.12 Հայաստանի Հանրապետության արևային քարտեզների և արևային ռեսուրսի տվյալների բազայի | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | վերանայում՝ վերլուծելով արևային սպեկտրալ ցանցից ստացված տվյալները (արևային ռեսուրսների մշտադիտարկման 5-6 կայան)<br><br>Արևային սպեկտրալ ցանցի արձանագրած տվյալները պետք է ստուգվեն և ճշգրտվեն արբանյակային տվյալների և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում գործող արևային ֆոտովոլտային կայաններում տեղադրված միկրոօդերևութաբանական կայանների տվյալների հիման վրա | | |
| **2. Էներգիայի պահեստավորում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.2, 5.5, 6.1 | 2.1 Էլեկտրաէներգիայի հիդրոպահեստավորում (ինտեգրված առկա և նոր կառուցվող ջրամբարների հետ, | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| ԿԶՆ-ներ՝ 7, 9, 13<br>Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններ | հնարավորության դեպքում լեռնային շրջաններում) | | |
| | 2.2 Ջրածնի կամ ամոնիակի պահեստավորում (օրինակ՝ թափոնից ջերմության կառավարում, արևային ֆոտովոլտային էներգիայի արտադրություն և այլն) | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.3 Սեղմված օդի պահեստավորման համակարգերի ինտեգրում փակ ստորգետնյա աղահանքերում և այլ հանքերում կամ չօգտագործվող խորքային հորատանցքերում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.4 Պահեստավորման կարողությունների ինտեգրում արևային ջերմային համակարգերում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 2.5 Լիթիում-իոնային մարտկոցների կիրառմամբ | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | պահեստավորման հզորության ավելացում | | |
| **3. Էլեկտրաէներգիայի հաղորդում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 9<br>Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններ | 3.1 Էլեկտրաէներգետիկական համակարգի տարածաշրջանային կապակցվածության ընդլայնում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 3.2 Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ենթակառուցվածքի դիմակայունության բարելավում | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| **4. Էլեկտրաէներգիայի բաշխում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 9<br>Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններ | 4.1 Ինքնավար էներգաարտադրող կայանների և Էլեկտրաէներգետիկական համակարգի փոխհոսքերի արդյունքում առաջացող հարմոնիկ աղավաղման և հզորության գործակցի անկման մեղմում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 4.2 Միկրոցանցի ինտեգրում բաշխիչ ցանցին | Կ | Դիտարկվող միկրոցանցը նպաստում է Հայաստանի Հանրապետության էներգետիկ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | համակարգի դիվերսիֆիկացմանը և դիմակայունությանը |
| | 4.3 Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ինտեգրում բաշխիչ ցանցին | Ա, Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| **5. Էներգիայի վերջնական օգտագործում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.5, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 9, 13<br>Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններ | 5.1 Քաղաքներում ջերմային կղզու ազդեցությանը հակազդելու միջոցառումների իրականացում (օրինակ՝ ճանապարհների կամ շենքերի կանաչ ծածկույթի ավելացում, մակերեսների անդրադարձման կարողությունների ավելացում, օրինակ՝ ճանապարհներ, մայթեր, տանիքներ և այլն) | Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 5.2 Էներգախնայող լուսավորություն | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 5.3 Էլեկտրական մեքենաներ (հանրային և մասնավոր տրանսպորտ) | Կ | Որակի և անվտանգության ենթակառուցվածքի ներդնում |
| | 5.4 Շենքերի արտաքին | Կ կամ Ա | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ |

| | | | |
|---|---|---|---|
| | մակերեսների էներգաարդյունավետության բարելավում | | կետի 3-րդ ենթակետի համաձայն<br><br>«ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թ. դեկտեմբերի 22-ի N 31-Ն հրաման<br><br>«ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N 167- |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N 03-Ն հրաման |
| | 5.5 Էներգաարդյունավետությունը ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգերում և էլեկտրաէներգիա սպառող սարքավորումներում | Ն | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 5.6 Արդյունաբերական գործընթացների էներգաարդյունավետություն | Կ, Ա | Կ՝ հասանելի լավագույն տեխնոլոգիաների համաձայն<br><br>Ա՝ որակավորված վերիֆիկատորների որոշմամբ<br><br>Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| **6. Պահանջարկի իմաստով վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրում** | 6.1 Արևային էներգիայով աշխատող ջրատաքացուցիչների կիրառում | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |

| | | | |
|---|---|---|---|
| Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.5, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 9, 13 | 6.2 Ջեռուցման, օդափոխության և հովացման համակարգերի համար ջերմային պոմպերի կիրառում | Կ | Բարձր ճնշման տուրբինային ռոտոր |
| | 6.3 Վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման և էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի վարկավորման պրոդուկտների նախատեսում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| **Կենսավառելիք** | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն<br>(ղղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Առաջին սերնդի կենսավառելիքի արտադրություն** | 1.1 Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կամ դեգրադացված հողերի կամ | Ա | Գյուղատնտեսական նշանակության լքված հողերի վրա համապատասխան մշակաբույսերի |

| | | | |
|---|---|---|---|
| Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.1<br>ԿԶՆ՝ 7 | ներկայումս օգտագործումից դուրս մնացած հողի վրա աճեցված ոչ պարենային մշակաբույսերից արտադրված կենսավառելիք | | (բացառությամբ՝ ինվազիվ տեսակների կամ աղակալած կամ տեխնոլոգիական աղտոտված հողերի ռեկուլտիվացիայի համար մշակաբույսերի) աճեցում |
| **2. Երկրորդ սերնդի կենսավառելիքի արտադրություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.1<br>ԿԶՆ՝ 7 | 2.1 Կենսավառելիք, որն արտադրվում է գյուղատնտեսական թափոններից, փայտի թափոններից<br>կամ գյուղատնտեսական մնացորդային նյութերից, ինչպիսիք են փայտի մանրատաշեղը, ծղոտը, եգիպտացորենի ցողունները և այլ բուսական ու կենդանական թափոններ<br><br>Տե՛ս նաև սույն Աղյուսակի «Թափոններից էներգիայի վերականգնում» | Ա, Կ | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ հետևյալ չափանիշների հիման վրա.<br><br>Ընդհանուր գեներացված կենսաքայքայվող թափոններից մշակվող կենսաքայքայվող թափոնների տոկոս<br><br>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը՝ որպես կենսաքայքայվող թափոններից ջերմոցային գազերի արտանետումների տոկոս |

| | | | |
|---|---|---|---|
| | ենթաուղղությունը | | |
| **3. Երրորդ սերնդի կենսավառելիքի արտադրություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 5.1<br>ԿԶՆ՝ 7 | 3.1 Կենսավառելիք՝ արտադրված ջրիմուռներից և ֆոտոսինթետիկ այլ օրգանիզմներից (Երրորդ սերնդի կենսավառելիքն արդյունավետ և կայուն լինելու ավելի մեծ ներուժ ունի, քան առաջին և երկրորդ սերնդի կենսավառելիքները, ջրիմուռների լիպիդների բարձր պարունակության և չմշակվող հողի վրա աճելու հնարավորության շնորհիվ) | Կ | Ջրիմուռները պետք է աճեցվեն ավանդական գյուղատնտեսության համար ոչ պիտանի տարածքներում՝ նվազեցնելով մրցակցությունը պարենային մշակաբույսերով վարելահողերի համար<br><br>Ջրիմուռների մշակման համար օգտագործվող կեղտաջրերի տոկոսը՝ որպես կենսավառելիքի արտադրության համար կեղտաջրերի մաքրման մեջ ներդնում<br><br>Ածխածնի կլանման կարողությունը ֆոտոսինթեզի ժամանակ ներծծվող ածխածնի երկօքսիդի քանակությունն է, որն ապահովում է ածխածինը կլանելու և ջերմոցային գազերի արտանետումները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նվազեցնելու երրորդ սերնդի կենսավառելիքի պոտենցիալը |

| **Ցամաքային տրանսպորտ** | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Միջքաղաքային և միջազգային ճանապարհներ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.2, 5.5, 6.1<br>ԿԶՆ՝ 9, 11 | 1.1 Գործող ճանապարհների՝ ներկայիս ստանդարտներին համապատասխանության գնահատում | Ն | Ճանապարհների անհարթությամբ պայմանավորված՝ արագության սահմանափակումների վերացում |
| | 1.2 Ըստ կիրառելիության՝ անհամապատասխանություններ ի որոշում և միջամտության ոլորտների առաջնահերթությունների | Ն | Ճանապարհների անհարթությամբ պայմանավորված՝ արգելակման անհրաժեշտության վերացում |

| | | | |
|---|---|---|---|
| | սահմանում<br><br>Ներկայիս ստանդարտներին համապատասխանության ապահովում | | |
| **2. Երկաթուղի**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.2, 5.5, 6.1<br>ԿԶՆ՝ 9, 11 | 2.1 Երկաթուղային տրանսպորտի օգտագործման ավելացում՝ գնահատելով երկաթուղային տրանսպորտի հետագա զարգացման հնարավորությունները | Կ | Ուղևորափոխադրումներում և բեռնափոխադրումներում երկաթուղային տրանսպորտի մասնաբաժնի ավելացում |
| | 2.2. Փոխադրման կարիքները բավարարելու համար գոյություն ունեցող երկաթուղային և մետրոյի ենթակառուցվածքի ընդլայնում | Կ | Ուղևորափոխադրումներում և բեռնափոխադրումներում երկաթուղային տրանսպորտի մասնաբաժնի ավելացում |
| **3. Համայնքային ճանապարհներ, քաղաքային տրանսպորտ (հանրային, մասնավոր), էլեկտրաշարժունակություն և թեթև քաշ ունեցող տրանսպորտային** | 3.1 Ճանապարհային կայուն ենթակառուցվածքի զարգացում (նոր, այդ թվում՝ շրջանցիկ ճանապարհներ և տրանսպորտային հանգույցներ, | Կ | Քաղաքի կենտրոնում երթևեկության բեռնաթափում<br><br>Ներքաղաքային երթևեկության համար պահանջվող ժամանակի |

| | | | |
|---|---|---|---|
| **4. Ջրային ռեսուրսների կայունությունը հանքարդյունաբերության մեջ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 4.1, 5.4, 5.5<br>ԿԶՆ՝ 6, 12 | 4.1 Ջրային ռեսուրսների կառավարման կայուն պլանի մշակում՝ ներառելով ելակետային տվյալների վերլուծությունը և գլոբալ տաքացման հնարավոր ազդեցությունների դիտարկումը՝ հանքարդյունաբերական ընկերություններում ջրային ռեսուրսների մշտադիտարկման, պահպանման և ճկուն մոտեցումների ձևավորման համար, ապահովելով կլիմայի փոփոխության նկատմամբ կայունությունը և նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի | Ն | Ջրային ռեսուրսների կառավարում<br><br>Միջոցառումների իրականացում՝ ջրօգտագործումը կառավարելու և ջրաղբյուրների աղտոտումը կանխելու համար<br><br>Մոտակա ջրի հոսքերի պարբերական համեմատական վերլուծություն՝ ելակետային տվյալների համեմատ քանակը և որակը որոշելու համար<br><br>Երրորդ կողմի մշտադիտարկման ծրագրի ներդնում՝ ջրի որակական և քանակական ցուցանիշների |

| | | | |
|---|---|---|---|
| | վրա ազդեցությունները | | վերահսկման և կառավարման համար<br><br>Վերամշակման փակ համակարգերի կիրառում՝ առանց ջրի արտահոսքի և 100% վերաշրջանառությամբ |
| | 4.2 Անկախ երրորդ կողմի միջոցով ֆիզիկական, քիմիական և կենսաբանական չափորոշիչների պարբերական մշտադիտարկման միջոցով ջրի որակի կանոնավոր մշտադիտարկման գործընթացի ձևավորում<br><br>Ջրի արդյունավետ մաքրման գործընթացների կիրառում, այդ թվում՝ կոագուլյացիա, ֆիլտրացիա և ախտահանում՝ անվտանգ և կայուն ջրամատակարարում | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | ապահովելու համար | | |
| | 4.3 Առավելագույնի հասցնել ջրի խնայողությունը՝ իրականացնելով թարմ (բնությունից վերցված) ջրի օգտագործումը նվազեցնելու, վերամշակումը խրախուսելու և ջրի խնայողության տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելու գործողություններ | Կ | Օգտագործելով փակ ցիկլով մշակման համակարգեր՝ առանց ջրի արտահոսքի և 100% լիարժեք վերաշրջանառությամբ<br><br>Խտացված պոչանքի %-ը |
| | 4.4 Կայունության բարելավում՝ ջրի մասին արդյունավետ հաշվետվողականության մեխանիզմների միջոցով<br><br>Թափանցիկ և համապարփակ հաշվետվողականության գործելակարգերի ներդնում ջրօգտագործումը, որակը և խնայողության ջանքերը | Ն | Հանքարդյունաբերական գործունեության ընթացքում ջրօգտագործման հաշվետվողականությունը պահանջում է համապարփակ մոտեցում, ներառյալ համապատասխան չափորոշիչների և ցուցանիշների հստակեցում, ճշգրիտ և հավաստի տվյալների հավաքագրում, ինչպես նաև |

| | | | |
|---|---|---|---|
| | մշտադիտարկելու համար<br><br>Կատարողականի հիմնական ցուցանիշների իրականացում՝ կայունության նպատակներին և գրանցված առաջընթացին կանոնավոր կերպով հետևելու համար | | հաշվետվությունների ձևավորում և հրապարակում՝ թափանցիկ և հետևողական ձևով<br><br>Ջրօգտագործման հաշվետվողականությունը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.<br><br>Ջրօգտագործում.<br>Քանակական հաշվարկ և հաշվետվություն՝ տարբեր նպատակներով արդյունահանված կամ վերցված ջրի ընդհանուր ծավալի վերաբերյալ: Անհրաժեշտ է տարբերակել թարմ (բնությունից վերցրած) և վերօգտագործվող (շրջանառու) ջրի աղբյուրները<br><br>Ջրի որակ.<br>Կատարել պարբերական ջրի որակի գնահատում անկախ երրորդ կողմի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կողմից՝ վերահսկելով այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են pH-ը, պղտորությունը, լուծված թթվածինը և աղտոտիչների կոնցենտրացիաները: Պետք է առանձնացնել և հրապարակել ջրի որակի ստանդարտներից և կարգավորող սահմաններից եղած շեղումները<br><br>Աղբյուրների պաշտպանություն. Հստակեցնել և հաշվետու լինել օգտագործվող ջրային աղբյուրների մասին՝ ներառյալ մակերեսային ջրային մարմինները, ստորգետնյա ջրերը և վերօգտագործվող (շրջանառու) ջուրը: Կիրառել միջոցառումներ՝ այդ աղբյուրները աղտոտումից պաշտպանելու համար<br><br>Արդյունավետության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջոցառումներ.<br>Հաշվետու լինել ջրի օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին՝ ընդգծելով ներդրված տեխնոլոգիաները կամ լավագույն գործելակերպերը<br><br>Արդյունաբերական գործունեության արդյունքում ստացված կեղտաջրերի արտահոսքի կառավարում.<br>Հաշվետու լինել արդյունաբերական գործունեության արդյունքում առաջացած կեղտաջրերի արտահոսքի որակի և քանակի մասին: Նշել դրանց մաքրման գործընթացները և դրանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը արտահոսքի չափանիշներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ջրի պահպանման միջոցառումներ. Ներկայացնել ջրի խնայողության ծրագրերն ու նախաձեռնությունները: Հաշվետու լինել դրանց արդյունքների և ազդեցության վերաբերյալ<br><br>Կլիմայական կայունություն. Գնահատել և հաշվետու լինել ընկերության ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության մասին: Ներկայացնել հարմարվողականության միջոցառումների ծրագիր, որը նպատակ ունի բարձրացնելու ջրային ռեսուրսների կայունությունը<br><br>Ջրային ռիսկերի գնահատում. Իրականացնել ջրային ռիսկերի գնահատում՝ պարզելու ջրամատակարարման և ջրի որակի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վրա ազդեցություն ունեցող հնարավոր վտանգները: Մշակել այդ ռիսկերի մեղմացման ռազմավարություններ և հաշվետու լինել դրանց իրականացման վերաբերյալ<br><br>Ջրի մշտադիտարկման ծրագրեր. Ստեղծել և հաշվետու լինել ջրի մշտադիտարկման ծրագրերի մասին՝ ժամանակի ընթացքում ջրի որակի և քանակի փոփոխությունների դինամիկային հետևելու նպատակով: Ներկայացնել դիտարկված միտումները և օրինաչափությունները |
| **5. Գործառնական արդյունավետությունը հանքարդյունաբերության ոլորտում** | 5.1 Իրականացնել գործընթացի ավտոմատացում և հանքարդյունաբերական ինքնավար տեխնոլոգիաներ՝ | Ն | Տե՛ս սույն Աղյուսակի «Հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման ենթակառուցվածք» |

| | | | |
|---|---|---|---|
| Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 4.1<br>ԿԶՆ՝ 9, 12 | գործառնական արդյունավետությունը բարելավելու, ռեսուրսների օգտագործումն օպտիմալացնելու և նորարարությունը խթանելու նպատակով<br><br>Ինտեգրել խելացի համակարգերը, առաջնահերթություն տալ անվտանգ գործելակարգերին և ապահովել աշխատակիցների համապարփակ ուսուցումը | | ուղղությունը |
| | 5.2 Կանխատեսելի սպասարկման տեխնոլոգիաների ներդնում՝ խնդիրները նախապես կանխատեսելու համար, մինչ դրանք տեղի կունենան, օպտիմալացնելով սարքավորումների կենսացիկլը և նվազագույնի հասցնելով | Ն | Կանխատեսելի սպասարկման որակ Սարքավորումների սպասարկման կառավարման համակարգ (ՍՊԿՀ). ՍՊԿՀ ինտեգրում. Աշխատանքային հոսքերի անխափան ինտեգրում՝ համակարգչայնացված սպասարկման կառավարման |

| | | | |
|---|---|---|---|
| | պարապուրդի ժամանակը տվյալների հիման վրա սպասարկման կառավարման համակարգչային համակարգերի միջոցով | | համակարգի հետ<br><br>Պատվերների գեներացում. Աշխատանքային պատվերների (սարքավորումների վերականգնման) ավտոմատ ձևավորման վերահսկում՝ կանխատեսիչ վերլուծության հիման վրա<br><br>Սարքավորումների առողջության հիմնարար ցուցանիշների պահպանում. Ընդհանուր սարքավորումների արդյունավետություն<br><br>Սարքավորումների առողջության հիմնական ցուցանիշի մշտադիտարկում<br><br>Ընդհանուր սարքավորումների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արդյունավետություն (սարքավորումների առողջության հիմնական ցուցանիշի մշտադիտարկում<br><br>Սարքավորման առողջության ցուցանիշ.<br>Մշակել և հետևել սարքավորման առողջության ցուցանիշին՝ հիմնված տարբեր չափորոշիչների վրա<br><br>Իրականացնել սարքավորումների հուսալիության ցուցանիշների հաշվառում<br><br>Վթարների միջև ժամանակահատված.<br>Հետևել վթարների միջև ժամանակահատվածին որպես սարքավորումների հուսալիության չափորոշիչ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Վերանորոգման միջին ժամանակ. Հետևել վերանորոգման միջին ժամանակին՝ սպասարկման արդյունավետությունը գնահատելու համար<br><br>Վերլուծել ծախսարդյունավետությունը. Ծախսերի կրճատում. Գնահատել կանխատեսիչ սպասարկման ծախսարդյունավետությունը՝ համեմատած արձագանքող կամ պլանային մոտեցումների հետ<br><br>Ներդրումների վերադարձ. Չափել կանխատեսիչ սպասարկման տեխնոլոգիաներում կատարված ներդրումների վերադարձը |
| | 5.3 Տվյալների վրա հիմնված | Ն | Տվյալների որակը և տվյալների |

| | | | |
|---|---|---|---|
| | ռազմավարությունների իրականացում միտումները որոշելու և բիզնեսի ռազմավարական պլանավորման համար տեղեկատվություն տրամադրելու համար<br><br>Առաջադեմ վերլուծական գործիքների կիրառում տարբեր տեղեկատվական բազաներից արժեքավոր տեղեկատվություն ստանալու համար<br><br>Տվյալների վերլուծության հստակ նպատակների սահմանում ընդգծելով հիմնական կատարողականի ցուցանիշները հաջողությունը չափելու համար | | վերլուծությունը տեղեկացված որոշումների ընդունման համար<br><br>Տվյալների որակ.<br>Ճշգրտություն. մշտադիտարկել տվյալների աղբյուրների ճշգրտությունը և ապահովել տվյալների որակի մասով ստանդարտներին համապատասխանությունը<br><br>Լրացվածություն. գնահատել տվյալների ամբողջականությունը տեղեկատվության բացերը բացառելու համար<br><br>Համապատասխանություն. ապահովել տվյալների ձևաչափերի և սահմանումների համապատասխանությունն ամբողջ կազմակերպությունում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Տվյալների կառավարում. քաղաքականության համապատասխանում. վերահսկել տվյալների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի համապատասխանությունը<br><br>Տվյալների պատասխանատվություն. հայտարարել և հստակեցնել տվյալների սեփականության դերերն ու պարտականությունները<br><br>Մասշտաբելիություն. ապահովել վերլուծական ենթակառուցվածքի ընդլայնման կարողությունը մեծացող տվյալների ծավալների համար<br><br>Արտադրողականություն. |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մշտադիտարկել վերլուծական գործիքների և հարթակների արտադրողականությունը<br><br>Ընդլայնված վերլուծություն.<br>կանխատեսիչ վերլուծություն.<br>վերահսկել կանխատեսիչ մոդելների ճշգրտությունն ու արդյունավետությունը<br><br>Նշանակող վերլուծություն.<br>գնահատել նշանակող վերլուծության ազդեցությունը որոշումների կայացման վրա<br><br>Որոշումների ազդեցության գնահատում.<br>բիզնեսի ազդեցություն.<br>չափել տվյալահեն որոշումների ազդեցությունը հիմնական արտադրողականության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ցուցանիշների վրա<br><br>Որոշումների ժամանակին կայացում.<br>գնահատել տվյալահեն որոշումների կայացման արագությունը |
| | 5.4 Մատակարարման շղթայի օպտիմալացում տվյալների վերլուծության կիրառմամբ՝ պահանջարկի օրինաչափությունները, պաշարների կառավարման օպտիմալացման և խնայողության հնարավորությունները բացահայտելու համար<br><br>Այնպիսի տեխնոլոգիաների, ինչպիսիք են իրական ռեժիմում հետագծելիությունը և ավտոմատացումը, | Ն | Մատակարարման շղթայի օպտիմալացման համար տվյալների վերլուծության որակի գնահատումը ներառում է հետևյալ բաղադրիչները.<br><br>Տեսանելիություն իրական ժամանակում.<br>ամբողջական տեսանելիություն.<br>վերահսկել և հետևել ապրանքների շարժը մատակարարման ամբողջ շղթայում՝ իրական ժամանակում<br><br>Տվյալների ճշգրտություն. ապահովել ճշգրտություն պահեստների |

| | | | |
|---|---|---|---|
| | ներդնում տեսանելիության բարձրացման և մատակարարումների ժամկետների կրճատման նպատակով<br><br>Տեղեկացված միջոցառումների նախաձեռնում՝ մատակարարումների անընդհատ գնահատման և բարելավման նպատակով՝ շուկայական առավելագույն արդյունավետության և դինամիկ պայմանների հարմարվողականության հասնելու համար | | մնացորդների, պատվերների կարգավիճակի և առաքումների վերաբերյալ իրական ժամանակում<br><br>Կանխատեսիչ վերլուծություն. պահանջարկի կանխատեսում. գնահատել պահեստային պաշարների օպտիմալացման համար կիրառվող պահանջարկի կանխատեսման մոդելների ճշգրտությունը<br><br>Ռիսկերի կանխատեսում. վերահսկել մատակարարման շղթայի ռիսկերի հայտնաբերման և մեղմացման արդյունավետությունը կանխատեսիչ վերլուծության միջոցով<br><br>Պահեստային պաշարների օպտիմալացում. |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պաշարների մակարդակներ. վերահսկել պահեստային պաշարները՝ ավելորդ կամ անբավարար պաշարներից խուսափելու նպատակով<br><br>Պատվերների կատարում. գնահատել պատվերների կատարման արդյունավետությունը տվյալահեն պատկերացումների հիման վրա<br><br>Երթուղիների օպտիմալացում. վերլուծել փոխադրումների համար օգտագործվող երթուղիների օպտիմալացման ալգորիթմների արդյունավետությունը<br><br>Առաքման ժամանակի ճշգրտություն. վերահսկել կանխատեսված և փաստացի առաքման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ժամանակների համապատասխանությունը<br><br>Պատվերների կառավարում. պատվերի մշակման ժամանակ. վերահսկել պատվերների մշակման և կատարման համար անհրաժեշտ ժամանակը<br><br>Պատվերների ճշգրտություն. գնահատել մատակարարման շղթայով անցնող պատվերների ճշգրտությունը<br><br>Կայունության ցուցանիշներ. ածխածնային հետք. վերահսկել մատակարարման շղթայի ածխածնային հետքի նվազեցման գործընթացը<br><br>Կայուն մատակարարում. գնահատել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կայուն մատակարարման գործելակերպերի արդյունավետությունը |
| **6.Պոչամբարների անվտանգություն**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.4, 5.5, 6.1<br>ԿԶՆ-ներ՝ 6, 12 | 6.1 Պոչամբարների կայունության ապահովում՝ մշակված նախագծի և ինժեներական պրակտիկաների միջոցով<br><br>Հնարավոր ռիսկերը մեղմացնելու նպատակով երկրատեխնիկական գնահատումների ներառում՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են գրունտի մեխանիկան և սեյսմիկ ակտիվությունը<br><br>Ջրի կառավարման հուսալի համակարգերի ներդնում՝ ջրի ավելցուկային ինֆիլտրացիան (ներսփռում) կանխարգելելու և | Ն | Պոչամբարների կայունությունը ֆունդամենտալ և ռազմավարական նշանակություն ունի աղետալի վթարներից խուսափելու համար, իսկ դրանք կարող են հանգեցնել մարդկային զոհերի և լուրջ վնասներ պատճառել շրջակա միջավայրին<br><br>Պոչամբարները պետք է նախագծվեն և կառուցվեն այնպես, որ դիմակայեն հնարավոր բոլոր վտանգներին, ինչպիսիք են երկրաշարժերը, ծայրահեղ եղանակային պայմանները և այլ երկրաբանական, բնապահպանական, բնական և մարդածին այլ գործոնները |

| | | | |
|---|---|---|---|
| | կառուցվածքային ամբողջականությունը պահպանելու համար | | Հիմք ընդունել Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.2 Պոչամբարների կառուցման և շահագործման պրակտիկաների օպտիմալացում՝ անվտանգությունը, բնապահպանական պահանջներին համապատասխանությունը և երկարաժամկետ կայունությունն ապահովելու նպատակով<br><br>Ինժեներական ստանդարտների և շինարարական հուսալի մեթոդաբանությունների կիրառություն՝ կառուցվածքի ամբողջականությունն ու կայունությունը բարձրացնելու համար | Ն | Պոչամբարները պետք է կառուցվեն և շահագործվեն այնպես, որ ապահովվեն դրանց կայունությունն ու անվտանգությունը, ներառյալ՝ կառուցման ժամանակ որակի վերահսկման միջոցառումները և շահագործման ընթացքում պարբերական մշտադիտարկումն ու սպասարկումը<br><br>Որակի կառավարման շինարարական պլանի նախագծման և իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետևյալ տարրերն ու նկատառումները.<br><br>Շինարարական կառավարման պլան և դրա իրականացում. |

| | | | |
|---|---|---|---|
| | Մշտադիտարկման համապարփակ համակարգերի ներդնում՝ շինարարական գործընթացներին հետևելու, զեկուցելու և հնարավոր խնդիրներն իրական ժամանակում հայտնաբերելու հնարավորություն ընձեռելու համար<br><br>Ակտիվ միջոցառումների նախաձեռնում՝ պոչամբարների կառուցման և շահագործման պրակտիկան շարունակաբար բարելավվելու համար՝ միաժամանակ առաջնահերթություն տալով անվտանգությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը և համայնքի բարեկեցությանը | | Մշակել համապարփակ շինարարական պլան, որը կնկարագրի բոլոր շինարարական աշխատանքները, ժամկետներն ու պատասխանատվության շրջանակները<br><br>Ներառել որակի վերահսկման, անվտանգության միջոցառումների և շրջակա միջավայրի պաշտպանության դրույթներ՝ շինարարության ընթացքում<br><br>Իրականացնել էրոզիայի վերահսկման միջոցառումներ՝ ջրային մարմիններում նստվածքային աղտոտումը կանխելու համար<br><br>Կատարել երկրաբանական-տեխնիկական հետազոտություններ՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գրունտների որակը և ֆիզիկոմեխանիկական հատկությունները գնահատելու և պատվարների հիմքերի ճիշտ նախագծում ապահովելու նպատակով<br><br>Դեկանտացիայի (հեղուկի հեռացում պինդ պոչանքից կամ հեղուկի արտահոսք պինդ մասից) և ջրահեռացման կառույցներ. կառուցել դեկանտացիայի և ջրահեռացման կառույցներ՝ ապահով պոչամբարից ջրի արտահոսքի կառավարման համար<br><br>Ներառել էներգիայի ցրման համակարգեր էրոզիան կանխելու համար<br><br>Ջրային ռեսուրսների կառավարման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ենթակառուցվածք.<br>Կառուցել ջրերի կառավարման ենթակառուցվածք՝ ներառյալ ջրային հոսքերի շեղման ջրանցքներ՝ մակերևութային ջրերի հոսքը վերահսկելու և լճացումը կանխելու նպատակով<br><br>Տեղադրել նստվածքամաքրիչ ավազաններ՝ նստվածքներով հարուստ ջրերի կառավարման համար<br><br>Գործիքային վերահսկման համակարգերի տեղադրում.<br>Տեղադրել մշտադիտարկման սարքավորումներ՝ հողի նստվածքի, ծակոտկեն ճնշման և պատնեշի կայունության վերաբերյալ իրական ժամանակում տվյալներ ստանալու համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ապահովել և վերահսկել սարքավորումների պարբերական տրամաչափարկումն ու անխափան աշխատանքը<br><br>Սեյսմիկ նկատառումներ. Իրականացնել շինարարական միջոցառումներ, որոնք հաշվի են առնում տարածաշրջանի սեյսմիկ կայունությունը և մեղմում են երկրաշարժերի հնարավոր ազդեցությունը<br><br>Նախագծային փաստաթղթերում նշված սեյսմիկ չափանիշներին համապատասխանություն<br><br>Շինարարական նյութերի որակ. Վստահելի մատակարարներից շինարարական նյութերի ձեռք |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բերում նախագծային պահանջներին համապատասխան<br><br>Կատարել պարբերական փորձարկումներ հողերի, խիճի, բետոնի և այլ նյութերի որակը ապահովելու և վերահսկելու համար<br><br>Փաստաթղթավորում և հաշվետվություն.<br>Վարել մանրամասն գրանցումներ շինարարական գործունեության վերաբերյալ՝ ներառյալ օգտագործված նյութերը, շինարարական մեթոդները և որակի վերահսկման միջոցառումները<br>Տրամադրել պարբերական հաշվետվություններ վերահսկող մարմիններին և շահագրգիռ կողմերին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Որակի ապահովման, վերահսկման համակարգ.<br>Ստեղծել անկախ որակի ապահովման, վերահսկման համակարգ՝ վերահսկելու և հաստատելու, որ շինարարական աշխատանքները համապատասխանում են նախագծային պահանջներին<br><br>Ներգրավել անկախ երրորդ կողմերին շինարարության փուլերում անկախ փորձաքննությունների և փորձարկումների իրականացման համար<br><br>Հիմք ընդունել Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.3 Արտակարգ իրավիճակներին | Ն | Պոչամբարների վթարները |

| | | | |
|---|---|---|---|
| | արձագանքման համապարփակ պլանների մշակում և կանոնավոր թարմացում, այդ թվում՝ խափանման (վթարների) ռեժիմների և սցենարների, տարհանման գործընթացների և հաղորդակցության ռազմավարությունների հետ միասին<br><br>Կանոնավոր վարժանքների և վերապատրաստմանն ուղղված վարժությունների կատարում անձնակազմի պատրաստվածությունը բարելավելու նպատակով<br><br>Մշտադիտարկման առաջադեմ համակարգերի իրականացում՝ հնարավոր խնդիրների վաղ հայտնաբերման համար և | | կանխելու և դրանց հնարավոր հետևանքները մեղմելու համար անհրաժեշտ է ունենալ բարձր որակի արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլաններ, որոնք պետք է ներառեն ընկերության անձնակազմի և համայնքի պարբերական ուսուցում և վարժանքներ<br><br>Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանի ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետնյալ տարրերն ու նկատառումները.<br><br>Ռիսկերի գնահատում.<br>Կատարել ռիսկերի համապարփակ գնահատում՝ հայտնաբերելու |

| | | | |
|---|---|---|---|
| | հաղորդակցության հստակ ուղիների հաստատում՝ համապատասխան պատկան մարմինների և համայնքների հետ<br><br>Արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող տեղական ծառայությունների հետ համագործակցություն՝ արտակարգ իրավիճակի դեպքում համակարգված և արդյունավետ արձագանքում ապահովելու նպատակով<br><br>Արտակարգ իրավիճակին արձագանքման գործելակարգերի շարունակական գնահատում և բարելավում՝ ելնելով քաղված դասերից և առաջացող | | հնարավոր արտակարգ իրավիճակներն ու դրանց ազդեցությունները<br><br>Հաշվի առնել բնական աղետները, տեխնոլոգիական վթարները, մարդկային սխալները և արտաքին սպառնալիքները<br><br>Իրավական համապատասխանություն.<br>Ապահովել ոլորտային ստանդարտներին և ուղեցույցներին Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանի համապատասխանությունը<br><br>Նպատակների և կիրառելիության հստակեցում.<br>Սահմանել Արտակարգ |

| | | | |
|---|---|---|---|
| | լավագույն պրակտիկաներից | | իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանի նպատակներն ու կիրառման շրջանակը տարբեր արտակարգ իրավիճակների համար<br><br>Մանրամասն ներկայացնել արտակարգ իրավիճակներում ընկերության անձնակազմի դերը և պարտականությունները<br><br>Հաղորդակցման և կապի ընթացակարգեր.<br>Սահմանել արտակարգ իրավիճակներում ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետ կապի և հաղորդակցման հստակ մեխանիզմներ<br><br>Կիրառել կրկնակի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ապահովագրությամբ (ռեզերվային) կապի համակարգեր արտակարգ իրավիճակներում կապի շարունակականությունն ապահովելու համար<br><br>Արտակարգ կոնտակտների և կապերի մասին տեղեկատվություն. Պահպանել արտակարգ իրավիճակներում կիրառվող միշտ արդի ցանկ՝ ներառյալ տեղական իշխանությունների ներկայացուցիչները, համապատասխան պետական գերատեսչությունները և ծառայությունները և ընկերության հիմնական անձնակազմը<br><br>Տարածել այս տեղեկատվությունը համապատասխան անձնակազմի և շահագրգիռ կողմերի միջև |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Արտակարգ ազդանշման ընթացակարգեր.<br>Մշակել արտակարգ իրավիճակների մասին տեղեկացման արագացված ընթացակարգեր<br><br>Ներդնել ազդարարման մի քանի մեթոդ՝ ազդանշաններ, հեռախոսազանգեր, ռադիոկապ, բարձրախոս համակարգեր, էլեկտրոնային ծանուցումներ և այլն<br><br>Տարհանման պլաններ.<br>Նախագծել և տարածել տարհանման պլաններ՝ նախատեսված անձնակազմի և շրջակա համայնքների բնակիչների համար<br><br>Սահմանել հավաքման կետեր և |

| | | | |
|---|---|---|---|
| | | | անվտանգ երթուղիներ<br><br>Արագ արձագանքման խմբեր. Ստեղծել և վերապատրաստել արագ արձագանքման խմբեր՝ տարբեր սցենարների համար<br><br>Համոզվել, որ խմբերի անդամները հստակ պատկերացնում են իրենց դերը և պատրաստ են գործել<br><br>Սարքավորումներ և ռեսուրսներ. Պահել արտակարգ իրավիճակներում օգտագործվող սարքավորումների ցանկ՝ ներառյալ հրդեհաշիջման սարքավորումներ, կապի միջոցներ, առաջին օգնության պարագաներ, ապաստարաններ և այլն<br><br>Պարբերաբար ստուգել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սարքավորումների տեխնիկական վիճակը և ապահովել դրանց մշտապատրաստությունը<br><br>Ուսուցում և վարժանքներ. Կազմակերպել պարբերական ուսուցում և արտակարգ իրավիճակների վարժանքներ<br><br>Գնահատել Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանի արդյունավետությունը՝ մոդելավորված արտակարգ սցենարներով<br><br>Հաստատել տեղական հրշեջ, ոստիկանության և բուժօգնության ծառայությունների հետ փոխգործակցություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Մշակել մեխանիզմներ արտակարգ իրավիճակներում հասարակության մեջ ճշգրիտ տեղեկատվության տարածման համար<br><br>Արձագանքել լրատվամիջոցների և հանրության հարցումներին՝ ապահովելով թափանցիկություն<br><br>Հետվթարային վերականգնման մեխանիզմներ.<br>Մոդելավորել պոչամբարի վթարի սցենարներ<br><br>Սահմանել գործողությունների պլան՝ իրավիճակի կայունացման, բնական միջավայրի վերականգնման և արտադրական գործունեության վերագործարկման համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Գնահատել էկոլոգիական վնասներն ու իրականացնել մաքրման աշխատանքներ<br><br>Փաստաթղթավորում և հաշվետվություն.<br>Փաստաթղթավորել արտակարգ արձագանքման բոլոր քայլերը՝ ներառյալ իրականացված գործողությունները, քաղված դասերը և բարելավման հնարավորությունները<br><br>Հաշվետվություններ ներկայացնել վերահսկող և պատկան մարմիններին ու տեղադրել ընկերության կայքում<br><br>Ճգնաժամային կառավարման խումբ. |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Սահմանել արտակարգ իրավիճակների ժամանակ որոշումների կայացման համար ճգնաժամային կառավարման թիմ<br><br>Համոզվել, որ թիմն ունի ճնշման տակ արդյունավետ գործելու բավարար վերապատրաստում և ունակություն<br><br>Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանի բովանդակության և իրականացման որակը |
| | 6.4 Պոչամբարների կանոնավոր ստուգումների իրականացում և մշտադիտարկման ներդնում՝ Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի տեղեկագրերում տրամադրվող ուղեցույցների համաձայն՝ անվտանգությունը, | Ն | Պոչամբարների պարբերական տեսչական ստուգումները պետք է իրականացվեն՝ հնարավոր ռիսկերն ու խնդիրները ժամանակին հայտնաբերելու, ինչպես նաև պոչամբարի նախագծային չափանիշներին համապատասխան |

| | | | |
|---|---|---|---|
| | պահանջներին համապատասխանությունը և շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու համար | | շահագործումն ապահովելու համար, որոնք պետք է ներառեն պարբերական երկրատեխնիկական և հիդրոլոգիական մշտադիտարկումներ ու տեսողական զննություններ<br><br>Հիմք ընդունել Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.5 Պոչամբարների փակման և ապամոնտաժման գործընթացների իրականացում՝ Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի ստանդարտների համաձայն՝ գործառնությունների անվտանգ և բնապահպանական իմաստով դադարեցումը պատասխանատու կերպով ապահովելու նպատակով | Ն | Պոչամբարները պետք է նախագծվեն և շահագործվեն հաշվի առնելով դրանց փակման և ռեկուլտիվացիայի պահանջները<br><br>Ի սկզբանե պետք է մշակվեն համապատասխան փակման և ռեկուլտիվացիոն ծրագրեր՝ ապահովելու համար, որ այն հանքավայրի շահագործման ավարտից հետո անվտանգ և |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արդյունավետ կերպով դուրս բերվի շահագործումից<br><br>Հիմք ընդունել Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.6 Իրականացնել ջրի կառավարման կայուն ռազմավարություններ՝ ապահովելու պոչամբարների անվտանգությունը, կենտրոնանալով հանգամանալից ստուգումների, մշտադիտարկման և Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի ստանդարտների ապահովման վրա՝ ջրի մակարդակի, դրենաժի և ջրհավաք ավազանից ջրերի հնարավոր ներթափանցման հետ կապված ռիսկերին | Ն | Պոչամբարները պետք է նախագծվեն և շահագործվեն հաշվի առնելով դրանց փակման և ռեկուլտիվացիայի պահանջները<br><br>Ի սկզբանե պետք է մշակվեն համապատասխան փակման և ռեկուլտիվացիոն ծրագրեր՝ ապահովելու համար, որ այն հանքավայրի շահագործման ավարտից հետո անվտանգ և արդյունավետ կերպով դուրս բերվի շահագործումից<br><br>Հիմք ընդունել Մեծ պատվարների |

| | | | |
|---|---|---|---|
| | արձագանքելու համար | | միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.7 Պոչամբարների պարբերական անկախ (երրորդ կողմից) ուսումնասիրությունների, աուդիտի իրականացում՝ գնահատելու դրանց կայունությունը, կառուցվածքային ամբողջականությունը, բնապահպանական պահանջներին համապատասխանությունը և ընդհանուր անվտանգությունը՝ հետևելով Մեծ պատվարների միջազգային հանձնաժողովի ստանդարտներին և ուղեցույցներին | Ն | Պոչամբարների նախագծման, կառուցման և շահագործման ընթացքում պարտադիր է պարբերաբար անկախ տեխնիկական աուդիտների իրականացումը՝ համապատասխան որակավորում և փորձ ունեցող կազմակերպությունների կողմից<br><br>Նշված աուդիտներն ապահովում են հավելյալ վստահություն առ այն, որ պոչամբարը նախագծված և շահագործվում է անվտանգության բարձրագույն չափանիշներին համապատասխան, որը հատկապես կարևոր է մեծ կամ բարդ պոչամբարների դեպքում<br><br>Հիմք ընդունել Մեծ պատվարների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջազգային հանձնաժողովի տեղեկագրերը |
| | 6.8 Խելացի և վաղ ազդարարման, իրական ժամանակում մշտադիտարկման համակարգերի, հեռահար զոնդավորման և մշտադիտարկման ներդնում | Ն | Արձագանքման խելացի համակարգերը կարևոր դեր են խաղում հանքարդյունահանման անվտանգության ապահովման գործում՝ նախազգուշացնելով վտանգների մասին և կանխելով վթարները<br><br>Հիմնական բաղադրիչներ.<br>Սեյսմիկ մշտադիտարկում.<br>հայտնաբերում է երկրաշարժային ակտիվություն և գետնային ցնցումներ, որոնք կարող են հանգեցնել փլուզումների<br><br>Տեսադիտարկում.<br>վերահսկում է վտանգավոր գոտիներ (տրանսպորտային գոտիներ, սարքավորումներ), |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հայտնաբերում խափանումներ<br><br>Փոշու մշտադիտարկում.<br>չափում է օդում փոշու մակարդակը՝ կանխելով շնչառական խնդիրներ<br><br>Եղանակի մշտադիտարկում.<br>նախազգուշացնում է վտանգավոր եղանակային պայմանների (կայծակ, քամի, տեղումներ) մասին<br><br>Այս համակարգերը, միավորված մեկ համակարգված մոտեցման մեջ, զգալիորեն բարձրացնում են հանքավայրերի շահագործման անվտանգությունը<br><br>Տե՛ս սույն Աղյուսակի «Հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման ենթակառուցվածք» |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ուղղությունը |
| **7. Հանքերի թթվային դրենաժ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.4, 5.5<br>ԿԶՆ՝ 6 | 7.1 Արդյունավետ միջոցառումների իրականացում հանքերի թթվային դրենաժի կանխարգելման համար, ինչպես հանքավայրի արդյունավետ կառավարում, ջրի մաքրման համապարփակ գործելակարգեր և թթվային ապարների դրենաժի գլոբալ Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի ուղեցույցի իրականացում | Ա | Թթվային դրենաժի կառավարման լավագույն ձևը դրա առաջացումը կանխելն է, որը հնարավոր է իրականացնել սուլֆիդային ապարների և հողերի մինիմալ խաթարումով, թափոնների և հանքափորվածքների արդյունավետ կառավարմամբ, ինչպես նաև ջրի կառավարման լավագույն գործելակերպերի կիրառմամբ<br><br>Այդ միջոցառումների ծրագրավորման և իրականացման համար կարևոր ուղեցույց է հանդիսանում Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի ուղեցույցը, որը ներառում է թթվային դրենաժիդերբայի կանխարգելման և վերահսկման առաջատար փորձը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 7.2 Ջրի մաքրման գործառնությունների իրականացում հանքերի թթվային դրենաժի մեղմանն ուղղված միջոցառումների շրջանակներում, որոնք ներառում են մասնագիտացված գործընթացների և տեխնոլոգիաների կիրառումը՝ հանքերից թթվային ջրերի վերացման և կառավարման համար<br><br>Առաջնահերթությունը պետք է տրվի թթվային դրենաժի կառավարման պասիվ տեխնոլոգիաներին | Ն | Հիմք ընդունել Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցը |
| | 7.3 Հանքերի թթվային դրենաժի կառավարման համար | Ն | Պասիվ մաքրման համակարգերը օգտագործում են բնական |

| | | | |
|---|---|---|---|
| | առաջնահերթությունը պետք է տրվի մաքրման պասիվ տեխնոլոգիաների ներդրմանը, որոնք օգտագործում են բնական գործընթացները և նախագծված ինժեներական լուծումները՝ հանքի թթվային դրենաժի բաղադրիչները չեզոքացնելու և հեռացնելու համար՝ այդպիսով նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը | | գործընթացներ թթվային դրենաժի մաքրման համար, օրինակ՝ այդ նպատակով կառուցված խոնավավայրերը, ճահիճները կամ այլ նախագծված համակարգերը, որոնք կարող են արդյունավետ լինել ցածր և միջին մակարդակի թթվային դրենաժի չեզոքացման համար և կարող են ավելի էժան լինել պահպանման տեսանկյունից, քան ակտիվ մաքրման համակարգերը<br><br>Հիմք ընդունել Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցը |
| | 7.4 Հանքերի թթվային դրենաժի և դրանց ռիսկերի մշտադիտարկման և պահպանման պարբերական մոտեցման ներդնում՝ ներառելով | Ն | Թթվային դրենաժի կանոնավոր մշտադիտարկումը կարևոր է, մաքրման համակարգերի արդյունավետ աշխատանքը և ջրերի որակի ստանդարտների |

| | | | |
|---|---|---|---|
| | կանոնավոր գնահատումները, վաղ բացահայտման համակարգերը և ակտիվ միջոցառումները՝ մեղմելու հնարավոր բնապահպանական և ջրի որակի ազդեցությունները Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցի համաձայն | | պահպանումը ապահովելու համար<br><br>Կանոնավոր սպասարկումը և վերանորոգումը անհրաժեշտ են, որպեսզի ապահովվի այդ համակարգերի շարունակական արդյունավետությունը<br><br>Հիմք ընդունել Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցը |
| | 7.5 Փոխգործակցություն տեղական համայնքի հետ՝ հանքերի թթվային դրենաժի համատեքստում՝ խրախուսելով բաց հաղորդակցությունը, հնարավոր ռիսկերի մասին տեղեկատվություն տրամադրելով և համագործակցել կայուն | Ն | Հանրության մասնակցությունը կարևոր է թթվային դրենաժի կառավարման համար, քանի որ հարակից համայնքներն առաջին հերթին են ենթարկվում աղտոտված ջրերի ազդեցությանը<br><br>Մասնակցությունը կարող է օգնել հարակից համայնքների հետ |

| | | | |
|---|---|---|---|
| | լուծումներ գտնելու ուղղությամբ՝ բնապահպանական խնդիրներին արձագանքելու և համայնքի բարեկեցությունն ապահովելու համար | | կառուցել վստահելի հարաբերություններ, և ապահովել, որ նրանց մտահոգությունները հաշվի առնվեն թթվային դրենաժի կառավարման ռազմավարություններում<br><br>Հիմք ընդունել Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցը |
| | 7.6 Թթվային դրենաժի ենթարկված  տարածքի վերականգնումը՝ վերականգնմանն ուղղված համալիր ջանքերի միջոցով, ներառելով գրունտի կայունացումը, բուսականության վերականգնումը և ջրերի մաքրումը վնասված տարածքները վերականգնելու և | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմելու համար՝ Թթվայնության կանխարգելման միջազգային ցանցի Թթվային ապարների դրենաժի գլոբալ ուղեցույցի պրակտիկային համահունչ, հաշվի առնելով մաքրման պասիվ համակարգերը | | |
| **8. Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցության մեղմում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.3, 5.5<br>ԿԶՆ՝ 6 | 8.1 Կենդանիների տեսակների պաշտպանություն | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 8.2 Բույսերի տեսակների պաշտպանություն | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 8.3 Գետերի, լճերի և ջրաճահճային տարածքների վերականգնում և պաշտպանություն | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 8.4 Անտառավերականգնում և անտառապատում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| | 8.5 Օդի աղտոտման հսկողություն և կանխարգելում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 8.6 Հողի աղտոտման կանխարգելում, հողերի վերականգնում, ռեկուլտիվացիա և մաքրում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |
| **9.Դիմակայունության բարելավում և կլիմայի փոփոխության հարմարվողականություն՝ իրականացնելով ռազմավարություններ և պրակտիկաներ՝ ուղղված շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերական ընկերության ունեցած ազդեցության նվազեցմանը և կլիմայական մարտահրավերներին դիմակայման ու արձագանքման կարողությունների բարելավմանը**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.2, 5.5<br>ԿԶՆ՝ 13 | 9.1 Համապատասխան ընկերության ռազմավարության և (կամ) գործողությունների պլանում հստակ գործունեությունների նախատեսում | Ա | Որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| Մշակող արդյունաբերություն | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Սնունդ**<br><br>**Խմիչք**<br><br>**Կաշի և հարակից արտադրանք**<br><br>**Ծխախոտային արտադրանք**<br><br>**Տեքստիլ և հագուստ**<br><br>**Դեղագործություն**<br><br>**Փայտ և փայտե ապրանքներ** | 1.1 Ենթաուղղությունների համար սնունդ (կաթ, միս, ձուկ, միրգ և բանջարեղեն), խմիչք (ալկոհոլային և ոչ ալկոհոլային), կաշի և հարակից ապրանքներ, ծխախոտային արտադրանք<br><br>Բնական, տեխնոլոգիական և հումքի արդյունավետ օգտագործումը (վերօգտագործումը), ինչպես նաև թափոններից զերծ և շրջանաձև տնտեսության | Կ, Ն, Ա | Կ՝ հասանելի լավագույն տեխնոլոգիաներին, արտանետումների սահմանային չափաքանակներին, հասանելի լավագույն տեղեկատուներին համապատասխանություն՝ հաշվի առնելով հետևյալը.<br>Էներգատարությունը (արտադրանքի կՎտժ/դրամ) ազգային միջինից առնվազն 20%-ով ցածր<br><br>Էներգաարդյունավետություն (արտադրանքի արժեքը դրամ/կՎԺ) |

| | | | |
|---|---|---|---|
| **Թուղթ և ցելյուլոզա**<br><br>**Տպագրություն**<br><br>**Ռետինե և պլաստմասե արտադրանք**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.3, 4.4, 4.5<br>ԿԶՆ-ներ՝ 6, 9, 12 | անցման մոդելների կիրառումը սահմանող նորմատիվ իրավական ակտի մշակում<br><br>Օրենսդրական պահանջների ներդնում<br><br>Արտադրական շղթայի և գործելակերպի արդիականացում, ներառյալ. մատակարարման շղթայի և լոգիստիկայի օպտիմալացում, սարքավորումների մոդիֆիկացիա և արդիականացում<br><br>Տեղամասում վերօգտագործում և վերամշակում, թափոնների մինիմիզացիա, այդ թվում նաև օգտակար երկրորդային ապրանքների համար | | Ածխածնի ինտենսիվություն կամ ածխածնատարություն (գրամ, $CO_2$/դրամ, արտադրանք) ազգային միջինից առնվազն 20%-ով ցածր<br><br>Ռեսուրսատարության օգտագործման արդյունավետությունը՝ ստեղծված պատրաստի արտադրանքի միավորի համար օգտագործված հումքը և այլն<br><br>Պատրաստի արտադրանքի համար փաթեթավորման օգտագործումը դրամային արտահայտությամբ<br><br>Պատրաստի արտադրանքի դիմաց առաջացող թափոնները և կեղտաջրերը դրամային արտահայտությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | թափոնների օգտագործում<br><br>Կայուն փաթեթավորում<br>1-3 շրջանակների համար, ջերմոցային գազերի հաշվառման փուլային իրականացում<br><br>Աշխատանքի անվտանգության կանոններին և ստանդարտներին համապատասխանության նորմատիվների, ստանդարտների պահպանում<br><br>Հավաստագրման և պիտակավորման ստանդարտների կիրառում<br><br>Քիմիական և վտանգավոր արտանետումների պատճառով | | Չափանիշները կսահմանվեն ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից՝ համապատասխան հասանելի լավագույն տեխնոլոգիաների նշումների համաձայն<br><br>Ն՝ լրացուցիչ չափանիշներ չկան<br><br>Ա՝ որակավորված վերիֆիկատորների որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | աղտոտվածության զգալի նվազում | | |

| Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության տեխնոլոգիաներ, ածխածնի կլանում (ածխածնի սեկվեստրացիա) և պահպանում | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն (հղում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **Ծրագիր, միջոցառում ուղղված կամ որի արդյունքում** | **Ծրագրի, միջոցառման տեսակ** | **Տեխնիկական համապատասխանության չափանիշներ** |
| **1. Կլիմայի փոփոխություն հարմարվողականություն և մեղմում, ածխածնի պահուստավորում և ածխածնի սեկվեստրացիա**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.1, 5.2<br>ԿԶՆ՝ 13 | 1.1 Կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության միջոցառումները ներկայացվում են գրեթե բոլոր ուղղություններում, մասնավորապես՝ գյուղատնտեսություն, էներգետիկա, ջուր, թափոններ, հանքարդյունաբերություն և այլն: Լրացուցիչ միջոցառումները դիտարկվում են դեպք առ դեպք սկզբունքով:<br><br>Ածխածնի կլանման և պահուստավորման միջոցառումները, որոնք ներկայումս առավել կարևոր են Հայաստանի Հանրապետության համար, թվարկված են անտառներին, հողերին և ջրաճահճային տարածքներին/տորֆային տարածքներին առնչվող մասերում<br><br>Գյուղատնտեսությունում, ագրոանտառային և անտառային տնտեսությունում ածխածնի | | |

| | | | |
|---|---|---|---|
| | սեկվեստրացիայի միջոցառումները (օրինակ՝ ածխածնային գյուղատնտեսություն) թվարկված են համապատասխան ուղղություններում և (կամ) ենթաուղղություններում | | |
| **2. Լքված արդյունաբերական և հանքարդյունաբերական տեղամասերի մաքրում կամ ռեկուլտիվացիա**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 3, 6 | 2.1 Այս կամ այն կոնկրետ լքված արդյունաբերական և հանքարդյունաբերական տեղամասի մաքրում կամ ռեկուլտիվացիա | Կ | Գործողության ծախսարդյունավետություն<br><br>Արդյունաբերական, հանքարդյունաբերական ռեկուլտիվացված տեղամասերի քանակը և ընդհանուր տարածքը (հա-ով) |
| **3. Շրջակա միջավայր. Կենսաբազմազանության պաշտպանություն և վերականգնում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 5.4, 5.5<br>ԿԶՆ՝ 15 | 3.1 Տե՛ս սույն Աղյուսակի «Անտառներ և ջրաճահճային տարածքներ», «Պահպանվող տարածքների կառավարում և կայուն զբոսաշրջություն» ուղղությունները | | |

| **Քաղաքաշինություն (բնակավայրերի կայուն և կանաչ զարգացում)** | | | |
|---|---|---|---|
| **Ենթաուղղություն** | **Ծրագիր, միջոցառում ուղղված** | **Ծրագրի,** | **Տեխնիկական** |

| **(hողում՝ տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներին, կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և ստանձնված միջազգային պարտավորություններին)** | **կամ որի արդյունքում** | **միջոցառման տեսակ** | **համապատասխանության չափանիշներ** |
|---|---|---|---|
| **1. Գլխավոր քաղաքաշինական պլանավորում (հատակագծեր)**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.2, 5.5<br>ԿԶՆ՝ 11 | 1.1 Մարդկանց բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **2. Բնակավայրերում շրջակա միջավայրի և համայնքային ծառայությունների որակի մշտադիտարկում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4, 5.5<br>ԿԶՆ՝ 11 | 2.1 Բնակավայրերում շրջակա միջավայրի որակի մշտադիտարկման համակարգի ներդնում կամ բարելավում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 2.2 Բնակավայրերում համայնքային ծառայությունների որակի մշտադիտարկման համակարգի ներդնում կամ բարելավում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **3. Քաղաքային անտառներ, քաղաքաշինական կանաչ գոտիներ և** | 3.1 Բնակավայրերում և հարակից տարածքներում կանաչ գոտիների | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| **քաղաքաշինական ջրաճահճային տարածքներ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.2, 5.4, 5.5<br>ԿԶՆ՝ 11<br>(Տե՛ս սույն Աղյուսակի «Անտառներ և ջրաճահճային տարածքներ» ուղղությունը) | ձևավորում<br>(հրապարակներ, այգիներ, ճահճուտներ, խոնավ տարածքներ) | | |
| **4. Համայնքային ճանապարհներ, քաղաքային տրանսպորտ (հանրային, մասնավոր), էլեկտրաշարժունակություն և թեթև քաշ ունեցող տրանսպորտային միջոցներ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.1, 5.2, 5.5, 6.1<br>ԿԶՆ՝ 6 | 4.1 Երթևեկության պլանավորում | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 4.2 Նոր որակի ճանապարհների, շրջանցիկ ճանապարհների, մայթերի, արահետների և կայանատեղիների (կամ կանգառների) վերականգնում կամ կառուցում | Կ, Ա | Որակավորումը կանաչ կամ անցումային՝ կախված ճանապարհների, մայթերի, որակից և դիմացկունությունից, ինչպես նաև դրանց երկայնքով կանաչ գոտիների և հեղեղատարների համակարգի առկայությունից կամ բացակայությունից |

| | | | |
|---|---|---|---|
| Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակ<br><br>(Տե՛ս սույն Աղյուսակի «Ցամաքային տրանսպորտ» ուղղությունը, «Էներգետիկա» ուղղության «Էներգիայի վերջնական սպառում» ենթաուղղության «Էլեկտրական մեքենաներ» միջոցառման բաժինը) | 4.3 Առկա և նոր ճանապարհները հեղեղատար համակարգերով զինում | Կ | Պատշաճ գործող հեղեղատար համակարգեր |
| | 4.4 Ճանապարհների մայթերի և արահետների երկայնքով ծառերի ու թփերի տնկում | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 4.5 Հանրային և մասնավոր օգտագործման նպատակով էներգաարդյունավետ էլեկտրական փոխադրամիջոցների (ավտոբուսներ, ավտոմեքենաներ և այլն) գնում | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **5. Փողոցների էներգաարդյունավետ լուսավորում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 4.1<br>ԿԶՆ-ներ՝ 7, 11<br>(Տե՛ս սույն Աղյուսակի «Էներգետիկա» ուղղության «Էներգիայի վերջնական | 5.1 Փողոցային էներգաարդյունավետ լուսավորության զարգացում | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |

| | | | |
|---|---|---|---|
| սպառում» ենթաուղղությունը) | | | |
| **6. Էներգաարդյունավետ շենքեր**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.1, 4.2, 5.2<br>ԿԶՆ-ներ՝ 11, 13<br>(Տե՛ս սույն Աղյուսակի «Էներգետիկա» ուղղության «Շենքերի Էներգաարդյունավետություն» ենթաուղղությունը) | 6.1 Բնակավայրերում ոչ բնակելի էներգաարդյունավետ շենքեր | Կ, Ա | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 6.2 Էներգաարդյունավետ բնակելի շենքեր | Կ, Ա | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 6.3 Արդյունավետ էներգետիկա և ջրախնայող սարքավորումներ | Կ | Կսահմանվի սույն հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն |
| | 6.4 Անհատական կամ խմբային վերականգնվող էներգետիկայի համակարգերի ներդնում | Կ | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| **7. Համայնքային աղբավայրերի կառավարում**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.5<br>ԿԶՆ՝ 11 | 7.1 Տե՛ս սույն Աղյուսակի «Թափոնների կառավարում» ուղղությունը | | |

| | | | |
|---|---|---|---|
| **8. Բնակավայրերում ջրային ծառայություններ**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակներ՝ 4.2, 5.4, 5.5<br>ԿԶՆ-ներ՝ 6, 11 | 8.1 Համայնքում ջրային ծառայությունները ներառում են' կենտրոնացված ջրամատակարարում, կեղտաջրերի և անձրևաջրերի հավաքում և մաքրում<br>(Տե՛ս՝ սույն Աղյուսակի «Ջրային ռեսուրսներ և ջրային համակարգեր» և «Թափոնների կառավարում» ուղղությունները) | | |
| **9. Բնակավայրերի պաշտպանությունը բնական աղետներից**<br>**(բարձր ռիսկայնության ոլորտներում)**<br><br>Տաքսոնոմիայի ռազմավարական նպատակ՝ 4.2<br>ԿԶՆ՝ 11<br>Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակ | 9.1 Սողանքներից պաշտպանող ինժեներական համակարգեր | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 9.2 Ջրհեղեղներից բնակավայրերը պաշտպանող ինժեներական համակարգեր | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 9.3 Ստորերկրյա ջրհեղեղների և հեղեղման բարձր վտանգի տակ գտնվող բնակավայրերում դրենաժային համակարգեր | Ա | Լրացուցիչ չափանիշներ չկան |
| | 9.4 Կանաչ և շրջանաձև տնտեսությանն անցմանը համապատասխանող հետազոտական, մասնագիտական | Ն | Լրացուցիչ չափանիշներ չկան |

| | | | |
|---|---|---|---|
| | (տեխնիկական փորձաքննություն և հմտություններ) և կառավարչական հմտությունների զարգացում | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ